№ 64 ԵՐԵՔՇԱԲԹԻ 25 ՄԱՐՏԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 25 ՄԱՐՏԻ № 64

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսականը 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Այսօր, երեքշաբթի, մարտի 25-ին
ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊՐՕՖԷՍՍՈՐ
Վ. Դ. ՊԼԵՏՆԵՕՎԸ
ԿԸ ԿԱՐԴԱՅ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
„ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ և ԵՒՐՕՊԱՆ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆԵԼԻՔԸ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ":
Տեղերի գները 3 ր. մինչև 30 կ.։
ՏՈՄՍԱԿՆԵՐԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ԹԱՏՐՈՆԻ ԿԱՍՍԱՅՈՒՄ.
273. Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին։ 1—1

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԾԻԾԱՂԻ ԵՐԵԿՈՅ

Ուրբաթ, մարտի 28-ին 1914 թ., կը կայանայ երկրորդ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ
„Кривое зеркало"
հետևեալ ծրագրով

I

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Երգիծաբան. դասախօսութիւն Հայոց Դրամ. արուեստի մասին Սալ-Մանի և Գ. Երիցեանի։
Կը կարդայ դերասան ԻՍ. ԱԼԻԽԱՆԵԱՆ
Դասախօսութեան ընդմիջումներում կը խաղացվեն հետևեալ պիէսները.

1) ԱՇՈՏ՝ Թագաւոր հայոց, ողբերգութիւն ըստ Կարինեանի
2) ԳԻՇԵՐՎԱՅ ՍԱԲՐԸ ԽԵՐ Է՝ կատակերգութիւն ըստ Սունդուկեանի
3) ՉԱՐ ՈԳԻ՝ դրամա ըստ Շիրվանզադէի
4) ՈՒԽՏՎԱԾՆԵՐ՝ սիմվոլական պիէս ըստ Ահարոնեանի
5) ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱ՝ դրամա 5 արար. ըստ Շանթի
6) ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ՝ ըստ Շանթի

II

ՕՐՎԱՅ ՉԱՐԻՔԸ ու ԲԱՐԻՔԸ

1) ՖՈՒՏՈՒՐԻԶՄ՝ միակ հայ ֆուտուրիստի դասախօսութիւնը, պատկերազարդած դեմօնստրացիաներով՝ բառաճիւղ, ձայնագոռ, տուակչարժ և գունագիր։
2) ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ՝ կամ մոդական լապտերի չարաճճիութիւնը։

III

ԿԵՆԴԱՆԻ ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ

20,000 վերստ Եւրօպայում, կամ «Աշխարհէ աշխարհ», ճանապարհորդութիւն Գարեգին Լևոնեանի։ Յոյժ ծիծաղաշարժ պատկեր 12,060 մէտր երկարութեամբ, կատարվում է Մակս Լինդէրի անմիջական հսկողութեան տակ։

IV

Ընդմիջումներին կը ստացվեն ՀԵՌԱԳԻՐՆԵՐ սեփական գործակալներից և կը հրատարակվի «ԿԱՂԴԵԻ» միօրեայ երգիծաբանական լրագիրը։
274. Տեղերի գները էժանացված են ✦ Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին 1—1

ՀԱՒԼԱԲԱՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

Չորեքշաբթի, մարտի 26-ին
ՅՕԳՈՒՏ ՇԱՄՔՈՐԵՑՈՑ (ԿԱՐՄԻՐ ԱՒԵՏԱՐԱՆ) ԾԽ. ԴՊ. ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ
Հայ Դրամատիկական խմբի դերասանների և սիրողների մասնակցութեամբ կը տրվի
Գորդինի յայտնի
ՄԻՐՐԱ ԷՖՐՕՍ
Դրամա, 4 գործ. 5 պատկեր։
Մասնակցում են՝ տ. տ. ՄԱՑՍՈՒՐԵԱՆ, Զաբել, Մանուչարեան, Ճէպէջեան, պ. պ. Մամիկօնեան, Ղազարեան, Երեմեան, Մարութեան և ուրիշներ։
Տեղերի գները 2 ր. 10 կ.-ից մինչև 50 կ.։ Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Հաւլաբարի Սպառողական Ընկերութեան խանութում և ակումբում։
Կարգադրիչ՝ Ա. ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆ ✦ Ռեժիսոր՝ տիկ. Օ. ՄԱՑՍՈՒՐԵԱՆ
տռ. 268. 3—1

ԿՈՎ. Հ. ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ

Այսօր, երեքշաբթի, մարտի 25-ին
Դերասանուհի տ. ՅԱՍՄԻԿԸ
Բարեհաճ մասնակցութեամբ պ. պ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ և ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
Կը ներկայացնէ
ՓԱՐԻԶԻ ՏՐՋՄՈՂԻԿԸ
Կոմէդիա 2 գործ. թարգմ. Փրիդօնեանի
ՋԱՒԷՇՏ
Մասնակցում են՝ տ. տ. Ցամիկ, Սաթենիկ, Արուսեակ, օր. Սօլովեան, պ. պ. Աղայեան, Ամատունի, Տէր-Գրիգորեան, Տէր-Դաւթեան, Պետրոսեան Տալեան։
Սկիզբն է ուղիղ ժամը 8-ին երեկոյեան։
տռ. 279. 1—1

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ

Չորեքշաբթի, մարտի 26-ին, բարեհաճ մասնակցութեամբ դաշնակահարուհիներ օր. օր. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ, ԲԱԲԱԼԵԱՆԻ, դերասանուհի օր. ԽԻԹԱՐԵԱՆԻ, արտիստ ՎԱԼԵՐԻԱՆՕՎԻ, ջութակահար ՎՐՕՅՐԻ նուագակցութեամբ լարախմբի, պ. ՔԱՓԱՆԱԿԵԱՆԻ, ՎԱԼԱԴԵԱՆԻ և պ. ԿԱՑԵԱՆԻ
Կը կայանայ
ՀԱՄԵՐԳ
ճոխ ծրագրով։ Մանրամասնութիւնը պրօգրամմայով։ Սկիզբը 8½ ժամին երեկոյեան. Տոմսակները կարելի է ստանալ Ընկ. շվէյցարի մօտ։
տռ. (տ. օ.) 278. 2—1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԷԼԵԿՏՐՕ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ և ՊԱՀԵՍՏ
„ԷՆԵՐԳԻԱ"
«Սէվերնի Նօմէրնէրի» ներքև, Նիկօլայեվսկի պեր., տէլէֆօն № 8-89.
ԱՐՄԱՏՈՒՐ էլեկտրական, արտասահմանեան ամենալաւ ֆաբրիկաներից, նորագոյն մօդելների։
●●●● **ՉԵՌՈՒՑԻՉ ՊՐԻԲՕՐՆԵՐ և ԱՊՊԱՐԱՏՆԵՐ** ●●●●
ստացված են մեծ քանակութեամբ։
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՇԱՏ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ
(Կ.) տռ. 277. 2—1

Ռուսական Փոխադարձ Ապահովագրական Միութեան Կովկասեան Բաժանմունքը

սրանով յայտնում է, որ դիվիդենդի բաշխումը պ. պ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻՆ՝ 7% իւրաքանչիւր պրէմիայից, որ վճարվել է 1913 թ. ընթացքում Ռուսական Փոխադարձ Ապահովագրական Միութեան մէջ ապահովագրված գոյքերի համար, տեղի ունի ամէն օր, սկսած մարտի 24-ից, առաւօտեան ժամը 11-ից մինչև ցեր. ժամը 3-ը Միութեան Կովկասեան Բաժանմունքի գրասենեակում, Սերգիէվսկայա փող., № 3.

Ռուսական Փոխադարձ Ապահովագրական Միութեան
Գլխաւոր ներկայացուցիչ՝ ԱՐ. Ն. ՄԻԼԵԱՆ
տռ. 270. 1—1

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

— o —

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21—23 մարտի

ՎԻԵՆՆԱ.—Վալօնից և Դուրացցօյից հաղորդում են, որ յոյն հրոսակախմբերը յարձակվել են Կորիցայի վրա։ Կորիցան դարձել է ապստամբութեան գլխաւոր վայրը։ Հարաւային Ալբանիայի շատ տեղերից էպիրոսցիք յետ են քշել ալբան զօրամասերին։

ՎԻԵՆՆԱ.—Վալօնից ստացված տեղեկութիւնների համաձայն, դրութիւնը Հարաւային Ալբանիայում մնում է լուրջ։ Ստոյգ տեղեկութիւններից երևում է, որ էպիրոսցի հրոսակախմբերի և սրբազան զօրամասերի մէջ կան շատ զգեստափոխ յոյն օֆիցէրներ և զինուորներ։ Հրոսակախմբերը ունեն թնդանօթներ ու գնդացիրներ, որոնց յունական ծագումը համարեա անկասկած է։ Վերջին օրերս ապստամբները առաջացել են դէպի հիւսիս, ճանապարհին ասպատակելով հանդիպած գիւղերը։

«Կոր. Բիւրօյին» հաղորդում են Վալօնից. «Եղած պաշտօնական տեղեկութիւնների համաձայն՝ մարտի 19-ին յունական հրոսակախմբերը ներս են խուժել Կորիցա և ապարդիւն տեղը մարտի 20-ին փորձել են յանկարծակի բերել ալբան իշխանութիւններին։ Ալբան ժանդարմները կարողացել են պաշտպանել քաղաքը։ Փողոցներում տեղի ունեցած ընդհարումների ժամանակ վիրաւորվեց մի հոլլանդացի մայոր։ Գեներալ Դէֆսէրն ուղարկել է օժանդակ գնդեր, որից յետոյ ապստամբները քաշվել են քաղաքից և սպիտակ դրօշակ պարզել»։

«Ալբանիշէ-Կոր.-ին» հաղորդում են Դուրացցօյից. «Էպիրոսից ստացված տեղեկութիւնները այստեղ մեծ յուզմունք յարուցին։ Մինիստրների խորհուրդը նիստի է ամբողջ օրը»։

ԱԹԷՆՔ.— Աթէնքի գործակալութիւնը պաշտօնապէս հաղորդում է, որ Կորիցան գրաւված է էպիրոսցի ապստամբներից։

ՎԻԵՆՆԱ.—«Կոր. Բիւրօյին» հեռագրում են Դուրացցօյից. «Ալբան ժանդարմէրիան ստիպված է կռիւ մղել ոչ միայն էպիրոսցիների հայդուկային խմբերի դէմ, այլ և յոյն կանոնաւոր զօրքերից կազմված զօրամասերի դէմ։ Ապստամբների թնդանօթաձիգ գնդերի հրամանատարները յոյն օֆիցէրներ են։ Շարունակ օգնութիւն ստանալով յոյներից, ապստամբները դառնում են աւելի համարձակ և գործում են խոշոր կենտրոնների դէմ, որոնց պաշտպանութեան համար ժանդարմէրիան ճիգեր է գործ դնում»։

ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21—մարտի

ԼՕՆԴՕՆ.—Ֆէլդմարշալ Ֆրէնչի տեղ գեներալ շտաբի պետ կարգվեց զօրահրամանատար Դուգլասը։ Այդ պաշտօնը առաջարկված էր նաև լորդ Կիտչէներին, բայց վերջինս ուղարկել էր մերժման պատասխան։

Ասկվիտը մեկնեց Իստֆայֆ՝ ընտրողական պայքարին մասնակցելու համար։ Կայարանում ամբոխը ի պատիւ Ասկվիտի ովասիա արեց։

ԼՕՆԴՕՆ.—Ասկվիտը հասաւ Կիւպար։ Ամենուրեք ճանապարհին նրան խանդավառ ընդունելութիւն էին ցոյց տալիս։ Ասկվիտը ճառեր էր արտասանում և ուղերձներ ընդունում։ Նիւկէսսլում Ասկվիտն ասաց. «Մենք ապրում ենք կրիտիքական շրջանում։ Վերաքննվում են հիմնական սկզբունքները։ Եթէ առաջադէմ տարրերը միանան, նրանք կամրապնդեն իրանց գործը»։ Լէդիբէնկում Ասկվիտը ճառեց ընտրողների ներկայութեամբ, որոնք ճառը լսեցին մեծ ոգևորութեամբ։

Շատ քաղաքական գործիչներ երեկոյեան Լօնդօնում և գաւառում ճառեր արտասանեցին գլխաւորապէս զօրքի հարցի մասին։ Լօնդօնում մի միտինգում հաստատվեց բրիտանացի դաշնակիցների լիգա։ Ռօբէրտսօնը ընտրվեց լիգայի նախագահ։ Կարսօնը յայտնեց, որ կառավարութիւնը պէտք է հանէ Ուլստէրը հօմրուլից կամ պէտք է վճռէ աքիւնահեղութիւն։ Միլնէրը ասաց, որ կարելի է յարուցանել բողոքի փոթորիկ և ստիպել կառավարութեանը կոչ անել երկրին։

Անձրևը բաւականին ի չիք դարձրեց ունիոնիստների ցոյցը Հայդ-Պարկում։ Լօնդօնի 14 կէտից երթերը, որոնց մասնակցեցին առաւելապէս ունևոր դասակարգերի անձինք, հասան Հայդ-Պարկ կէսօրվայ ժամը 4-ի մօտերը երաժշտախմբերով, դրօշակներով ու ազգային դրօշակներով։ 14 պլատֆորմներից 70 հռետոր, գլխաւորապէս պարլամենտի անդամներից, դիմեցին ճառերով, որոնց քանիցս ընդհատեցին միտինգին ներկայ լիբերալները։ Ձեռքերը բարձրացնելով ու բուռն ծափահարութիւններով ընդունվեց բանաձև, որով պահանջվում է, որպէսզի զօրքը և նաւատորմը չուղարկվեն գործելու Ուլստէրի դէմ և որպէսզի հօմրուլի հարցը յանձնվի ժողովրդի վճռին։ Լիբերալները աղաղակներով ու սուլոցներով ընդունեցին բանաձևը։

Միտինգի ժամանակ սուֆրաժիստուհիների մի խումբ խոշոր անկարգութիւններ գործեց, ներս մտնելով, չը նայած ոստիկանութեան ձեռք առած միջոցներին, Հայդ-Պարկ և կազմելով իր միտինգը ունիոնիստների երկու պլատֆորմների մէջ տեղում։ Ընդհարում ծագեց Ուլստէրի կողմնակիցների և սուֆրաժիստուհիներ միջև, որ տևեց մօտ մի ժամ։ Ոստիկանութիւնը ցրեց սուֆրաժիստուհիներին։ Կատարվեցին մի քանի ձերբակալութիւններ։ Կալանաւորվածների թւումն է միսսիս Դրումմօնդը։

ԼՕՆԴՕՆ.—Ասկվիտը Լէդիբէնկում, դիմելով ընտրողներին, ասաց ի միջի այլոց, որ ներքին խաղաղութիւնը պահպանելու պատասխանատուութիւնն ընկնում է իշխանութիւնների և ոստիկանութեան վրա։ Բարեբաղդաբար, միայն հազուագիւտ դէպքերում քաղաքացիական իշխանութիւնները պէտք են ունենում դիմել զօրքի օգնութեան, բայց այդօրինակ դէպքերում զինուորի, ինչպէս և իւրաքանչիւր սովորական քաղաքացու պարտաւորութիւնն է՝ կատարել քաղաքացիական իշխանութեան պահանջը։ Խօսելով հօմրուլի մասին, Ասկվիտն ասաց. «Մենք կարծում ենք, որ միութեան միջոցով ձեռք բերված համաձայնութիւնը կը համապատասխանէ երկրի և երկու խոշոր քաղաքական կուսակցութիւնների շահերին»։

ԼՕՆԴՕՆ.—Իօրկշիրի հանքերում գործադուլը ընդարձակ չափեր է ընդունում։ Ներկայումս գործադուլների թիւը հասնում է 170,000-ի։

ԳԼԱԶԳՕ.—Սուֆրաժիստուհիները փորձեցին պայթեցնել եկեղեցին, բայց վնասեցին միայն մուտքի դռները։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

21—23 մարտի

ՑԱՐՍԿՕԵ-ՍԵԼՕ.—Նորին Մեծութիւններին մօտ կայացաւ պաշտօնական նախաճաշ ի պատիւ ռումինական օգոստափառ հիւրերի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Այսօր աշխատանքները վերսկսվեցին Սիմէնս և Հալսկէ գործարանում։

Երեկոյեան Կալինկինի կամուրջի և Նարվսկիե Վօրօտա կոչված տեղի միջև բայօնում բանուորների հոծ ամբոխը փորձեց ցոյց անել յեղափոխական երգերի երգեցողութեամբ։

Ոստիկանական խմբերը ցրեցին ամբոխը կալանաւորելով հինգ հոգու։

Ռումինական դեսպանի մօտ ի պատիւ ռումինական բարձր հիւրերի կայացաւ ճաշ ու խնճոյք, որին ներկայ էին Մեծ Իշխանները և Իշխանուհիները, մինիստրների խորհրդի նախագահը, մինիստրները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ծովային և զինուորական դումայական մասնաժողովը ընդունեց առանց կրճատելու պետական պաշտպանութեան կատարելագործման համար կառավարութիւնից պահանջվող բոլոր գումարայատկացումները։

Մամուլի օրէնսգիծը քննող մասնաժողովը, աւարտելով իր զբաղմունքները, ցանկալի համարեց առաջադիմականների առաջարկութիւնը այն մասին, որպէսզի մամուլի մէջ հրատարակվեն սահմանված կարգով Պետական Դումայի և Խորհրդի ընդհանուր ժողովների արձանագրութիւնները։ Մասնաժողովը մերժեց Պուրիշկևիչի առաջարկութիւնը, որպէսզի կառավարութեանը բացառիկ իրաւունք տրվի զետեղելու պարբերական հրատարակութիւններում առևտրական յայտարարութիւնները։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը Դումային օրէնսգիծ ներկայացրեց՝ Սամարայում կանանց բարձր մանկավարժական ինստիտուտ հիմնելու մասին ի յիշատակ 1861 թ. փետրվարի 19-ի, միջնակարգ դպրոցների վարժուհիներ պատրաստելու համար։

Մամուլում երևցած այն տեղեկութիւնները, թէ իբր ներքին գործերի մինիստրութեանը կից գումարվելու է մշտական ռաբբինական մասնաժողով, սխալ են։ Մինիստրութիւնը նկատի ունի մօտիկ ապագայում գումարել միայն ժամանակաւոր ոչ աւելի քան երկու ամսով ռաբբինական մասնաժողովի նիստը՝ քննելու մի քանի հարցեր, վերաբերեալ հրէական դաւանութեան ծէսի կանօններին ու ռաբբիների գործողութիւններին։

Ներքին գործերի մինիստրը, մինիստրների խորհրդին ներկայացրեց մի նախագիծ՝ յատկացնելու օրէնսդրական կարգով երկու միլիօն ռուբլի 1914 թ. հակախոլերային ու հակաժանտախտային ձեռնարկութիւնները գլուխ բերելու համար զեմստվօների և քաղաքների միջոցով։

Զինուորական մինիստրութիւնը հրաման է արձակել, որպէսզի ոստիկանութիւնը ամենախիստ հսկողութիւն ունենայ ոգելից ըմպելիքների վաճառումը արգելելու այն վայրերում, ուր կը սկսվեն երիտասարդներին զինուորական ծառայութեան կոչելու գործողութիւնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Գիշերս հրդեհ ծագեց Սեռօմեատնիկօվի քաղցրաւենիների գործարանում։ Աշխատում էին բոլոր հրդեհաշէջ խմբերը։ Հրդեհը հանգցրին միայն այսօր ցերեկով։ Գործարանային շինութիւնը այրվեց մինչև վերջին թելը։ Հրդեհաշէջները փրկեցին աւելի քան 80 հոգու՝ բանուորների կացարաններից։ Մի կին, որ իրան նետել էր պատուհանից, մահացաւ։ Պակասում են մի ծերուկ և մի երեխայ։ Վնասը կէս միլիօն է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Պետերբուրգի մամուլի գործերի վարչութիւնը արգելք դրեց «Сѣверная рабочая газета»-ի № 37-ի և «Стойкая Мысль»-ի № 12-ի վրա։ Խմբագիրները ենթարկվում են պատասխանատուութեան։

ՕԴԵՍՍԱ.—Ռուս-գալիցիական ընկերութեան և համառուսական ազգային միութեան միացեալ ժողովում կոմս Բօբրինսկին իշխանութիւնների և հոծ բազմութեան ներկայութեամբ զեկուցում կարդաց Գալիցիայի, Բուկովինայի և Ուգօրի-Ռուսի ռուսների արդի դրութեան և Մարմարօշի ու Լվովի դատավարութիւնների մասին, ընդգծելով այդ դատավարութիւնների քաղաքական ու հասարակական նշանակութիւնը։ Զեկուցումը ընդհատվում էր ծափահարութիւններով։ Վերջում հռետորը յարգորեց օգնել նիւթապէս ու բարոյապէս աւստրօ-ունգարական ռուսներին։

Տեղիս կանանց բարձր բժշկական դասընթացքներին շնորհված են բարձր կրթական հաստատութեան իրաւունքները։

ՄՈՍԿՎԱ.—Համալսարանին կից հանդէսով բացվեց Լիդիա Շչուկինայի նուիրած 100,000 ռուբլով հոգեբանական ինստիտուտը։ Մաղթանքից յետոյ կայացաւ հանդէս։ Արտասանվեցին ճառեր և կարդացվեցին ժող. լուս. մինիստրի և ռուսական բոլոր համալսարանների ողջոյնի հեռագիրները։

ԱԽԱԼՔԱԼԱՔ.—Առաւօտը զգացվեց ուժեղ երկրաշարժ։

ԱԽԱԼՔԱԼԱՔ.—Առաւօտը դարձեալ երկրաշարժ էր։

ԿԻԵՎ.—Դատաստանական պալատի անհետևանք թողեց Մարգոլինի բողոքագիրը, որին նահանգական դատարանը Բէյլիսի գործի դատավարութեան առիթով հանել էր երդ.-հաւատարմատարների դասից։

ԿԻԵՎ.—Ուժեղ փոթորիկ է։ Գետի մէջ խեղդվեցին 14 հոգի։

ՌԻԳԱ.—Ռիխարդ Պոլէ գործարանի դրամատար Ցիրցէնը, ստանալով բանկերից չէկերով 106,000 ռուբլի, անյայտացաւ։

ՊԱՐԻԶ.—Ի նկատի ունենալով որ անհնարին է քննել 1914 թ. բիւջէն մինչև նոր ընտրութիւնները, պատգամաւորների պալատը ընդունեց մայիս և յունիս ամիսների գումարների օրինագիծը։ Ցրնթացս երրորդ հանրապետութեան ամբողջ գոյութեան՝ պալատը առաջին անգամն է հրաժարվում իր լիազօրութիւններից, չը հաստատելով այս տարվայ բիւջէն։

ՊԱՐԻԶ.—Պալատ։ Քննիչ մասնաժողովի նախագահ Ժօրէսը պաշտպանում է մասնաժողովի անկողմնապահութիւնը և յայտնեց, որ մասնաժողովը հերթական գործերին անցնելու բանաձև չէ առաջարկում։ Ժօրէսը դէմ է դատարանով գործ սկսելուն, որի համար գործող օրէնքները հիմունք չեն տալիս։

Պալատը միաձայն ընդունում է մի բանաձև, որ պարսաւում է ֆինանսների միջամտութիւնը քաղաքականութեան մէջ և քաղաքականութեան միջամտութիւնը արդարադատութեան մէջ. 359 ձայնով ընդդէմ 103-ի պալատը մերժեց յանձնել դատարանի քննութեան Մօնիսի, Կայօյի, Բրիանի, Ֆաբրի, Բիզօ-դէ-Լիլի գործողութիւնները։ 265 ձայնով ընդդէմ 120-ի ընդունվեց այն առաջարկութիւնը, որ արտայայտում է պալատի մտադրութիւնը՝ լաւագոյն կերպով բաժանելու իշխանութիւնները։

Նիստերը յետաձգվեցին մինչև յունիսի 2-ը։ Նստաշրջանը փակվեց։

ՊԱՐԻԶ.—Պուանկարէն իր ամուսնու հետ մեկնեց հանգստանալու համար Րիվէրա։ Հրաժեշտ տուին մինիստրները։ Հասարակութիւնը ովացիա արաւ։

ՍԷՆ-ԺԱՆ (Նիւֆաունլէնդ).—«Նիւֆաունլէնդ» շոգենաւի 64 նաւաստիներ փոկեր որսալիս սառոյցի կտորի վրա ջրից տարվեցին. բոլորն էլ խեղդվել են։

ՍԷՆ-ԺԱՆ.—«Նիւֆաունդլէնդ» նաւի նաւաստիների թիւը 189 էր։ Խեղդվեցին 77 հոգի, գտնվեցին 69 դիակ. 36 հոգի խիստ տուժել էին ցրտից։

ԲԵԼԳՐԱԴ.—Ռումինական գահաժառանգի Պետերբուրգ այցելութեան առիթով «Սամօուպրավա» գրում է. «Այցելութիւնը հանդիսանում է ապացոյց նրա, որ Ռումինիան հաստատ վճռել է առանձին բարեկամական յարաբերութիւնների մէջ մտնել Ռուսաստանի հետ և անյողդողդ ընթանալ այդ ուղիով։ Մենք ուրախ ենք, որ անկեղծ յարաբերութիւններ են հաստատվում սլաւոնների դարաւոր պաշտպան Ռուսաստանի և մեզ բարեկամ Ռումինիայի միջև, որպիսի հանգամանքը ապահովութիւն է բալկանեան խաղաղութեան ու գրաւական լաւագոյն ապագայի բալկանեան ժողովուրդների համար»։

ԲԵԼԳՐԱԴ.—Նոր երկիրները Սերբիային միացնելուց յետոյ, մենավաճառութեան վարչութիւնը տեղեկացրեց Սերբիայի առևտրական շրջաններին, որ գոյութիւն ունի թղթի, գլանակների, ծխախոտի և նաւթի մենավաճառութիւն, որից յետոյ տեղական վաճառականների մօտ եղած նման ապրանքները կնքվեցին։ Սակայն մի սերբիահպատակ առևտրականից, որ այդ տեսակ ապրանքներ էր գնել Անգլիայում, նոյնպէս խլվեցին ու կնքվեցին։ Մեծ-բրիտանական հիւպատոսը, իմանալով այդ մասին, գնաց առևտրական շինութիւնը և կոտրեց կնիքը։ Սերբիական իշխանութիւնները անյապաղ բողոքեցին և պահանջեցին յետ կանչել հիւպատոսին։ Միջադէպը կը լուծվի նպաստաւոր մաքով մօտիկ ապագայում։

ԱԹԷՆՔ.—Վիլհէլմ կայսրը՝ այցելեց յունական «Ավէրօվ» յածանաւը և հարցուփորձ արաւ նաւաստիներին կռիւներին մասնակցելու մասին։

Վախճանվեց ֆինանսների նախկին մինիստր Կարապանոսը։

Եկաւ ռումինական գեներալ Կօանդան, որ այցելեց Վենիզէլոսին, որը յետոյ ի պատիւ նրա նախաճաշ տուեց։ Կօանդան վաղը մեկնում է Եգիպտոս։

ՍՕՖԻԱ.—Բուլղարական գործակալութիւնը նորից հերքում է այն լուրերը, թէ սերբ-բուլղարական սահմանագլխում գործում են բուլղար հրոսակախմբեր։

ԷԼԲԱՍՕ.—Կառավարութեան կողմնակիցները կառավարութեան զօրքերի կորուստները Տօրբէշում հաշւում են 5500 սպանված, վիրաւոր և գերված։

ՀՌՈՄ.— Պատգամաւորների պալատում շարունակվեց կառավարութեան դեկլարացիայի քննութիւնը։ Պատասխանելով զանազան հռետորների, Սալանդրան ասաց, որ երկիրը ներկայ րոպէին պահանջում է պաշտպանել այն դրութիւնը, որպիսին նա ձեռք է բերել միւս մեծ պետութիւնների շարքում, խելացի միջոցներ դպրոցական, տնտեսական ու սոցիալական հարցերի լուծման համար, լաւ ու ազնիւ վարչական անձինք, բարեխիղճ ֆինանսական վարչութիւն։ Զօրքի համար արտակարգ ծախքերի անհրաժեշտութիւնը ընդունվել է նախկին կաբինետից։ Գեներալ Գրանդին ընդունեց զինուորական մինիստրի պորտֆելը այն հաւատով, թէ նրան կաջողվի բաւարարութիւն տալ պետական պաշտպանութեան պահանջներին, համակերպվելով երկրի միջոցների հետ։ Նկարագրելով ֆինանսական կացութիւնը, Սալանդրան յայտնեց, որ կառավարութիւնը մտադիր չէ դիմել արտաքին փոխառութիւնների։ (Բուռն ծափեր)։ Վիճաբանութիւններն աւարտված են։

ՍԱՆՏ-ՆԱԳՕ (Չիլի).—Պրինց Հէնրիխի մօտ եղաւ խնճոյք հանրապետութեան պրեզիդենտի, մինիստրների, բարձր պաշտօնական անձանց և հասարակութեան ներկայացուցիչների ներկայութեամբ։

ԿԱՀԻՐԷ.—Պաշտօնապէս յայտարարված է Սաիդ-փաշայի կաբինետի հրաժարականը։ Մուստաֆա-փաշա Ֆէհմին ստանձնել է նախագահի պաշտօն մինիստրների խորհրդում առանց պորտֆէլի։

ՏՕԿԻՕ. — Կաբինետի կազմը. պրեմիէր՝ Կիոուրա, արտաքին գործերի մինիստր՝ Ուշիբա, (?) մինիստր՝ Սայօնձի, ներքին գործերի մինիստր՝ Մունակատա, ֆինանսների՝ Արաի, լուսաւորութեան՝ Ցուկուխարա, արդարադատութեան՝ Մացումարա, երկրագործութեան ու առևտրի՝ Օսիկավա, ճանապարհների հաղորդակցութեան՝ Դէն, ծովային՝ Կատօ, զինուորական՝ հաւանօրէն Խօնգօ։ Կաբինետը անկուսակցական է։

Կուրէում երկրորդ ջարդ է եղել նաւաստիների միջև։ Մասնակցել են մի քանի հարիւր մարդ։ Կանչվել է զօրք։ Ծանր վիրաւորված են 5 ոստիկան։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

—o—

ՔԻՒՐԴԱԿԱՆ ԽԼՐՏՈՒՄՆԵՐ

—

Կ. Պոլսից հեռագրում են, որ Դիարբէքիրի և Էրզրումի վիլայէթներում յուզմունք է տիրում պետական հարկերի աւելացումից։ Երզնկայում անկարգութիւններ են։ Բողոքներ են ուղարկված մայրաքաղաք։ Էրզրումցիք սպառնում են, որ եթէ դրութիւնը չը փոխվի, նրանք ստիպված կը լինեն դիմել Ռուսաստանի օգնութեան։ Այս յայտարարութիւնը ճնշող ազդեցութիւն է գործել ղեկավար թիւրք շրջանների վրա։

—

Վերջին տեղեկութիւններից երևում է, որ թիւրքերը արհեստականապէս են ստեղծել Բիթլիսի շարժումը, գրգռելով քիւրդերին, թէ նրանց ազդեցութիւնը կը նուազէ հայկական բարենորոգումների գործադրութիւնից յետոյ։ Շարժումը ուղղված է և հայերի դէմ։

—

Բիթլիսում հայ ազգաբնակութիւնը ահաբեկված է։ Հայերը զինաթափ են արված։ Թիւրք-քիւրդական կռիւների քաւութեան նոխազ, ինչպէս երևում է բոլոր նշաններից, դառնալու են հայերը։ Անհրաժեշտ են լուրջ միջոցներ։

—

(Պետ. Հեռ. Գործ.)

21—23 մարտի

Կ. ՊՈԼԻՍ.—Օսմանեան գործակալութեան տեղեկութեան համաձայն, Բիթլիսի շրջանում կառավարութիւնից յայտարարված բարենորոգումների դէմ սկսված շարժման գլուխ կանգնած են շէյխեր մօլլա-Սէլիմը և Շէհաբէդդինը։ Երկուսն էլ աւազակախմբերի հետ փորձել են գրոհ տալով վերցնել Բիթլիսը։ Կառավարութիւնը շտապով ձեռք է առել անհրաժեշտ միջոցները՝ կազմակերպված շարժումը իր բնում խեղդելու նպատակով։

Բիթլիսը շրջապատած քիւրդական հրոսակախմբերը, լուրերի համաձայն, յետ են մղել կառավարական զօրքերին, որոնք գործելիս են եղել թնդանօթներով ու գնդակացիրներով։ Շտապով զօրքեր են ուղարկվում մօտակայ տեղերից։

Կ. ՊՈԼԻՍ.—Բիթլիսի մօտ տեղի ունեցած կռւին մասնակցել են աւելի քան 2000 քիւրդ, որոնք և ձեռք են ձգել կառավարական զօրքերի բոլոր թնդանօթներն ու գնդակացիրները. ժանդարմները և զինուորները, թւով 400 հոգի, յետ են նահանջել։ Լուրերի համաձայն, քիւրդերը գրաւել են բարձունքները և պարտիզանական գործողութիւններ են սկսել։

Կ. ՊՈԼԻՍ.—Քիւրդերը, որոնք մասամբ գրաւել էին Բիթլիսը, յետ են մղված այդտեղից բերդապահ զօրքից։ Շարժման պարագլուխ մօլլա-Սէլիմը չը կարողացաւ նահանջել և ընկերների հետ ապաստանեց ռուսաց հիւպատոսարանում, ուր ժողովվում է ժողովուրդը, որոնելով պաշտպանութիւն։

Ապստամբութեան կենտրոնավայր հանդիսանում է Խիզանը։

Հայոց պատրիարքը հրատարակեց մօլլա-Սէլիմից իր ստացած նամակը, որ յայտնում է, թէ քիւրդերը ձեռք չեն տալու հայերին և ապստամբվել են բացառապէս երիտասարդ-թիւրքերի դէմ։

ԳԵՐՄԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՉԸ

—

Արևելքում կատարված քաղաքական կերպարանափոխութիւնը նորից Եւրոպայի ուշադրութիւնը դարձրեց Հայաստանի վրա։ Ներկայումս մեծ պետութիւնները զբաղված են Բ. Դրան հետ համաձայնութեան գալու Արևելեան Անատոլիայի հայաբնակ նահանգների բարենորոգութիւնների ծրագրի վերաբերմամբ, որով առաջը պիտի առնվի Արևելքի հանգստութեան և համաշխարհային խաղաղութեան սպառնացող վտանգների, որոնք կարող են առաջ գալ, եթէ շարունակվեն մինչև այժմ տիրող պայմանները։ Հաստատ ակնկալութիւն կայ, որ այս անգամ, հայկական հարցի համար եղած նախկին բոլոր բանակցութիւններից տարբերվելով, գոհացուցիչ արդիւնք ձեռք կը բերվի։ Կարելի է յուսալ, որ վատթարագոյն չարիքները կը վերացվեն և հայ ժողովրդին հնարաւորութիւն կը տրվի քաղաքական ու տնտեսական ասպարէզում աւելի մեծ չափով արծարծելու իր կարողութիւնները, քան մինչև այժմ։

Գերմանիան, որի քաղաքագիտական ներկայացուցիչներն զգալի կերպով նպաստեցին բարենորոգումների ծրագրի առաջ տարվելուն, անմիջապէս շահագրգռված է այդ բանում։ Փոքր Ասիայում ունեցած իր մեծ տնտեսական ձեռնարկութիւններով, որ մասամբ ընկնում են առաւելապէս հայ բնակչութիւն ունեցող տեղերում, իսկ մասամբ էլ մօտիկ առնչութիւն ունեն այդպիսի տեղերի հետ, Գերմանիան պահանջ պիտի զգայ սերտ յարաբերութեան մէջ մտնելու հայերի հետ, որոնք այդ բոլոր երկիրներում տնտեսական ու քաղաքակրթական կեանքի վարիչներն են։

Բացի այդ, մի քանի տասնեակ տարիներից ի վեր արդէն Գերմանիայի և Հայաստանի միջև որոշ հաղորդակցութիւն կայ հաստատված՝ քաղաքակրթական բնոյթով։ 1894—96 թւականների կոտորածներից յետոյ, բաւական թւով գերմանական դպրոցներ, որբանոցներ, հիւանդանոցներ հիմնվեցին Հայաստանում, որոնք գերմանական քաղաքակրթութիւն են տարածում այնտեղ։ Հայերն իրանց վաղուց մեծ եռանդով հետամուտ են գերմանական լեզուն, գրականութիւնը և գիտութիւնն ուսումնասիրելու։ Հարիւրաւոր հայ ուսանողներ յաճախել են գերմանական բարձրագոյն դպրոցները և մեր կրթական հաստատութիւնների, ուսուցիչների և սաների հետ կապեր հաստատել։ Այլ և իրանց ազգային հարուստ գանձերը հրապարակ հանելու համար նրանք այստեղից են խրախոյս և ուղղութիւն ընդունել, այնպէս որ հայոց լեզուի, պատմութեան և գրականութեան ուսումնասիրութիւնը գերմանական գիտութեան կենդանի գործակցութեամբ է տեղի ունենում։

Սակայն այդ բոլոր մղումները մնացել են մինչև այժմ առանց ներքին կապակցութեան միմեանց հետ։ Շատ տարածված նախապաշարումներ արգելք են լինում գերման-հայկական յարաբերութիւններն աւելի սերտ կերպով ձևաւորվելուն։ Կարևոր է երկու ազգերի մէջ ճանապարհ հարթել՝ միմեանց քաղաքակրթութեան մասին փոխադարձաբար աւելի լաւ հասկացողութիւն ունենալու համար։ Այս նկատումով կոչ ենք անում բոլոր այն շրջաններին, որոնք տնտեսական, քաղաքական, գիտական կամ ընդհանուր քաղաքակրթական, մարդասիրական տեսակէտից ցանկանում են գերման-հայկական յարաբերութիւնների մշակումը, միանալով մեզ հետ՝ կազմել մի «գերման-հայկական» միութիւն, որի նպատակը լինի՝

ա) Տարածել արդար և անաչառ գնահատութիւն հայ ժողովրդի մասին՝ Գերմանիայում, և գերման ժողովրդի մասին՝ հայերի մէջ։

բ) Հետամուտ լինել հիմնաւոր գաղափար տալու մի կողմից ընդհանուր քաղաքակրթութեանը հայ ազգի մատուցած ծառայութիւնների մասին, միւս կողմից էլ գերման ժողովրդի՝ հայկական քաղաքակրթութեանը նպաստող ձգտումների մասին։

գ) Մշակել անձնական յարաբերութիւններ գերմանացիների և հայերի, մանաւանդ Գերմանիայի ուսանողների միջև։

Իբրև միջոց այդ նպատակներին հասնելու՝ ի նկատի են առնված հետևեալ միջոցները.

1) Գերմանական մամուլին ըստ ամենայնի ուղիղ տեղեկութիւններ մատակարարել Հայաստանի դրութեան մասին։

2) Հրատարակել մի ամսաթերթ՝ երկու լեզուներով, որ հայկական քաղաքակրթութեան հետ ծանօթացնէ գերմանացիներին և ճանապարհ հարթէ դէպի Հայաստան՝ գերմանական քաղաքակրթութեան համար։

3) Թարգմանել արժէքաւոր հայերէն գրուածքները՝ գերմաներէն և գերմաներէն գրուածքները հայերէն։

4) Գերմանիայում հիմնել մի գիտական հայկական մատենադարան՝ հայոց լեզուի, քաղաքակրթութեան և պատմութեան ուսումնասիրութեան համար։

5) Զօրացնել գերմաներէնի ուսուցումը հայոց դպրոցներում։

6) Հիմնել Գերմանիայի հայ ուսանողների համար մի տեղեկատու գրասենեակ և նրանց մտցնել գերմանական ընտանիքների մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՄՐՐԿԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ

—

Ստացանք հետևեալ գումարները. 1) «Մշակ» լրագրի խմբագրութիւնից 20 ր., 2) Ալ. Մելիք-Ազարեանից 50 ր., 3) Միրզոյեանի բաղնիքի ծառայողներից, հանգանակված Ստեփան Տէր-Յովհաննիսեանի և Մկրտիչ Շահգալդեանի միջոցով՝ 10 ր., 4) Բաթումից՝ Մ. Մերուրնութեանից 5 ր., 5) Գանձակից՝ Գ. քահ. Թումանեանից 3 ր.։ Ընդամենը ստացած ունենք 88 ր.։

ՄՐՐԿԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

—

Ինչպէս հաղորդեցինք, ուրբաթ, մարտի 22-ին, փոխարքայի պալատում կայացաւ մրրկից վնասվածներին օգնող Յանձնաժողովի Կովկասեան ճիւղի առաջին նիստը, որին մասնակցում էին ճիւղի գրեթէ բոլոր անդամները, որոնց ցուցակը արդէն տպված է «Մշակի» մէջ։ Նախագահուհի՝ կոմսուհի Վօրօնցօվա-Դաշկովայի խնդրանօք՝ ատենապետի պաշտօնը ստանձնեց փոխարքայի օգնական գեներալ Միշլաևսկին։

Ատենապետը ամենից առաջ առաջարկեց շնորհակալութիւն յայտնել Կովկասեան կոմիտէի նախաձեռնողներին, որ և ժողովը միաձայն ընդունեց, ապա որոշեց նրա կազմը և ֆունկցիաները։ Որոշվեց 1) բացի 35 անդամներից հրաւիրել իբրև անդամ նաև կաթօլիկների առաջնորդ Ս. վ. Տէր-Աբրահամեանին, Ի. Մինկևիչին (ներկայացուցիչ լեհերի), պ. պ. Ցեֆելովին և Կօզակօվին (ներկայացուցիչ մօլականների և բաբտիստների), 2) բոլոր հարցերի լուծումը թողնել կոմիտէին, 3) տալ խորհրդին միայն գործադիր մարմնի իրաւունք, 4) կոմիտէի և խորհրդի նիստը կայացած համարել, երբ ներկայ են անդամների կէսը, 5) ընտրել գանձապահ Ա. Միլեանին և քարտուղար՝ Գ. Կլերժէին։

Այդ նախապատրաստական և կազմակերպչական որոշումներից յետոյ ժողովը զբաղվեց բուն հանգանակութեան գործին վերաբերեալ առաջարկների և հարցերի քննութեամբ։ Եղան զանազան առաջարկներ և ի վերջոյ ժողովը կայացրեց հետևեալ որոշումները. 1) բանալ ճիւղեր Կովկասի բոլոր քաղաքներում, գաւառական և այլ կենտրոններում, ուր հնարաւոր է, 2) հրատարակել կոմիտէի անունից կոչ ազգաբնակութեան ռուսերէն և տեղական լեզուներով (այս կոչի բնագրի կազմումը յանձնվեց առաջարկն անող պ. Ս. Յարութիւնեանին), 3) միօրեայ հանգանակութիւն կատարել (գանձանակ) քրիստոնէական բոլոր եկեղեցիներում, թողնելով օրի որոշումը ամեն մի դաւանութեան հոգևոր պետին, 4) նոյնպիսի միօրեայ հանգանակութիւն կատարել բոլոր մուսուլման մզկիթներում, ինչպէս և հրէական սինագոգներում հոգևոր պետերի նախաձեռնութեամբ, 5) դիմում անել նախագահուհու ստորագրութեամբ բոլոր կառավարչական, հասարակական, դասակարգային, կուլտուրական, ֆինանսական, արդիւնաբերական հաստատութիւններին, 6) թոյլատրել մամուլի օրգաններին բանալ հանգանակութիւն և ստանալ նուիրատուութիւններ (առաջարկ Հ. Առաքելեանի), խնդրել մամուլի օրգաններին պրօպագանդ մղել՝ հաշիւների և այլ յօդուածների տպագրութեամբ, 7) հանգանակութիւն կատարել և առանձին անձանց ձեռքով (Ա. Միլեան յանձն առաւ հանգանակութիւնը վաճառականների մէջ), 8) կազմակերպել ներկայացումներ, երեկոյթներ, դասախօսութիւններ (էկզարխ Ալեքսէյ դիտողութիւն յայտնեց կարդալու մի դասախօսութիւն, իսկ «Тифл. Лист.» թերթի խմբագիր Խ. Խաչատրեան յայտնեց, որ մտադիր է կազմակերպել մի ներկայացում), 9) ընդունել նուիրատուութիւն և իրեղէններով, որոնց դեզինֆեկցիան և պահպանութիւնը յանձն առաւ քաղաքային վարչութիւնը։

Ժողովը փակվեց ժամը 3-ին։

ԿՈՉ

—

Փետրվարի 28-ին և մարտի 1-ին Սև և Ազովեան ծովերի ափերում բարձրացած տարերքը կատարեց սարսափելի, աննկարագրելի աւերումներ։

Անսպասելի մրրկի ոյժով ծովը կատաղաբար դուրս եկաւ իր ափերից, ծառացաւ դէպի բարձր և հեղեղեց ահագին տարածութեամբ մարդաբնակ վայրեր։

Ջուրը տարել է ամեն ինչ։

Ծովի ալիքները կլանել են ամբողջ գիւղեր, բնակավայրեր, որ տակաւին կեանք էին շնչում. և տարել են իրանց հետ մարդկային բազմաթիւ զոհեր,—ոչնչացրել են տներ, անասուններ, ինվենտար, այգիներ և այն ամենը, որ մարդկային ծանր աշխատանքով ստեղծվել է երկար տարիների ընթացքում։

Իսկ այնտեղ, հեռու ծովի ափերից, Կուբանի շրջանի մէջ, Ստաւրօպօլի նահանգում, աւերածութեան պատկերը նիւթականի կողմից ոչ պակաս սոսկալի է։ Մոլեգնած մրրիկը քանդել, ոչնչացրել է տներ, կառուցուածքներ, քայքայված են տնտեսութիւններ, իսկ հրդեհները, որ պատահել են տեղ-տեղ, ամենակործան քամիների ժամանակ, ոչնչացրել են տասնեակ, հարիւրաւոր տնտեսութիւններ։

Կատաստրոֆան այնքան մեծ է, նրա հետևանքները այնքան սարսափելի, որ ներկայումս անհնար է հաշւի առնել թէ կործանված մարդկանց թիւը, թէ վնասված տեղերի վնասների չափը։

Կործանվել են հարիւրաւոր մարդիկ. իսկ ապաստանի, հագուստի և կերակրի կարօտ մնացել են հազարաւորները։

Այդ անբախտների լացին ու աղերսանքին պէտք է արձագանք տայ ամեն ոք՝ դրդված մարդասիրական և մերձաւորին սիրելու զգացմունքից։

Վնասվածներին օգնելու մեծ գործի գլուխ է բարեհաճել կանգնել Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան։

Օգնութեան մասին եղած կոչը իսկոյն արձագանք գտաւ Մեծ Ռուսաստանի բազմամիլիոն բնակչութեան սրտերում։ Ամենուրեք կազմվում են կոմիտէներ՝ նուիրաբերութիւններ հաւաքելու համար. ամենուրեք առատ և մեծ նուիրաբերութիւններ են լինում վնասվածների օգտին։

Կովկասը չէ կարող չը միանալ ընդհանուրի վշտին. չէ կարող արձագանք չը տալ ընդհանուր աղէտին։

Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհու Կայսրուհու Բարձրագոյն թոյլտւութեամբ Կովկասում բացվում է նուիրաբերութիւններ հաւաքող կոմիտէ նախագահութեամբ Նորին Պայծառափայլութիւն փոխարքայի ամուսին ստատս-դամա Ելիզավէտա Անդրէևնա Վօրօնցօվա-Դաշկովայի։

Կոմիտէն, կազմված Թիֆլիսի բոլոր դաւանութիւնների հոգևորականութեան և ազգութիւնների ու հասարակական բոլոր հիմնարկութիւնների ներկայացուցիչներից, դիմելով իր գործունէութեան, ներկայ կոչով դիմում է բոլոր հասարակական, բարեգործական և առևտրական հիմնարկութիւններին, բոլոր բարեգործներին, ջերմ կոչով արձագանք տալ սարսափելի աղէտին, որ վիճակվեց Ռուսաստանի Հարաւի բնակչութեան։

Թող Կովկասի բազմացեղ, բազմալեզու և բազմակրօն ժողովուրդները միանան այս սրբազան մոմենտում, համաժողովրդական օգնութեան գործի մէջ, գործի, որը իր մեծութեամբ արժանի է ամենքին, որոնք ընդունակ են բարի յոյզերի, արտայայտութիւնների։

Վնասվել են մեր հարևան վայրերը։

Կովկասը առաջինը պէտք է արձագանք տայ վնասված հարևանների օգնութեան, անտուն ու անտեղ մարդկանց, կանանց, ծերերի և երեխաների օգնութեան։

Հարկաւոր է շուտափոյթ, լայն օգնութիւն։

Թող իւրաքանչիւրը ոք այս սուրբ գործի մէջ ձգի իր լուման՝ չը քաշվելով նրա չափից։

Որքան շատ լինի նուիրաբերութիւնը, որքան շատ գան նրանք, այնքան քիչ կը լինի արցունքն ու վիշտը, այնքան սակաւ կը լինի տանջանքը։

Օգնեցէք։

Թող չը նուազի նուիրաբերողի ձեռքը։

Նուիրաբերութիւնները ուղղել կոմիտէի նախագահուհի փոխարքայի ամուսին՝ կոմսուհի Ելիզավէտա Անդրէևնա Վօրօնցօվա-Դաշկովայի անունով։

Ռուսաստանի Հարաւում մրրկից վնասվածների օգտին նուիրաբերութիւններ հաւաքող Կոմիտէի Կովկասեան ճիւղ

—

Ծանօթ. խմբ. — Ինչպէս յայտարարեցինք, նուիրատուութիւնները կարելի է ուղարկել և «Մշակի» խմբագրութեան, որ կը հասցվի ըստ պատկանելոյն։

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

—

Կիրակի, մարտի 23-ին, ցերեկվայ ժամը 2-ին, տեղի ունեցաւ քաղաքային ծննդաբերական ապաստարանի հանդիսաւոր օծումը և բացումը, որին հրաւիրված էին բարձր իշխանութեան ներկայացուցիչները, բոլոր դաւանութիւնների հոգևորականութիւնը, հասարակական կուլտուրական հաստատութիւնների, մամուլի ներկայացուցիչներ, քաղաքային ձայնաւորներ և հիւրեր։ Օրհնութիւնը կատարեց Բագուի եպիսկոպոս Պիմէնը, որ խօսեց և քարոզ։ Օրհնութիւնից յետոյ քաղաքագլխի պաշտօնակատար Ա. Արղութեան-Երկայնաբազուկ ծանօթացրեց հանդիսականներին ապաստարանի հիմնարկութեան պատմութեան հետ, ապա կառավարիչ բժ. Մօնինը կարդաց մանրամասն զեկուցում, որից երևաց, որ ծննդաբերական ապաստարանը բացվել է 1906 թ. հոկտ. 16-ին 15 մահճակալով, բայց նրա պահանջը այնքան զգալի դարձաւ, որ քաղաքային վարչութիւնը որոշեց լայնացնել և կառուցանել սեփական շինութիւն, որ սկսվեց 1912 թ. հոկտեմբերին և վերջացաւ այժմ, 1914 թ. մարտին։ Ապաստարանը կառուցված է գիտութեան վերջին խօսքի բոլոր յարմարութիւններով և պահանջներով։ 1906 թ. մինչև այս տարվայ սկիզբն 9183 ծննդկաններ այստեղ օգնութիւն են գտել։

Հանդէսից յետոյ հրաւիրեալները շրջեցին ապաստարանի բոլոր սենեակները, դիտեցին կահ-կարասիները և բոլոր յարմարութիւնները և ապա հիւրասիրվեցին թէյով և պաղեղէնով։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԶԷՄՍՏՎՕՅԻ ՄԱՍԻՆ

Շաբաթ, մարտի 22-ին, երեկոյեան ժամը 8-ին, Հասարակական ակումբում կայացաւ զեկուցումն և վիճաբանութիւններ՝ Կովկասում զէմստվօ մտցնելու հարցի մասին։ Մի համառօտ զեկուցումից յետոյ, որ արեց իշխան Գ. Թումանեան, եղաւ կարծիքների և մտքերի փոխանակութիւն, որոնց մէջ փոխարքայի օգնական հօֆմէյստէր Պետերսօնի արտայայտած կարծիքները և դիտողութիւնները գրաւեցին հանդիսականների ուշադրութիւնը իրանց լրջութեամբ և կարևորութեամբ։ Յայտարարելով որ ինքն անպայման կուսակից է զէմստվօյի ներմուծմանը մեր երկրում, որ այդ հարցը գտնվում է իր լուծման վերջին, որ այլ ևս նա հակառակորդներ չունի, հօֆմէյստէր Պետերսօն կցեց, որ, սակայն, կան երկու կարևոր կէտեր, որոնց կանոնաւոր լուծումից է կախված ապագայ զէմստվային հաստատութիւնների զարգացումը և բարգաւաճումը. և ահա այդ կարևոր հարցերի մասին խիստ ցանկալի էր լսել տեղական գործիչների հեղինակաւոր կարծիքը։ Այդ հարցերն են 1) զէմստվային հարկատւութիւնը (обложеніе), 2) զէմստվօյի տիպը, ի նկատի ունենալով Կովկասի ազգաբնակութեան բազմացեղ և բազմատարր կազմը։ Կովկասում զէմստվային հարկատւութիւնը հասցված է իր գագաթնակէտին, մինչև 7%, մինչ Ռուսաստանում 5% է. այլ ևս աւելացնելու հնարաւորութիւն չը կայ։ Արդ, եթէ զէմստվային հաստատութիւնները չը մտցված, ժողովուրդը արդէն տալիս է 7% զէմստվային տուրքեր, որտեղից պէտք է վերցնել այն ահագին գումարները, որոնք հարկաւոր կը լինեն զէմստվային հաստատութիւնները մտցնելուց յետոյ։

Դժբաղդաբար, այս երկու կարևոր հարցերին լուրջ պատասխան տուող չեղաւ։

ՊՐՈՖ. Վ. Դ. ՊԼԵՏՆԵՕՎԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Այսօր, մարտի 25-ին, Արքունական թատրոնում կը կայանայ պրօֆ. Վ. Դ. Պլետնեօվի դասախօսութիւնը «Հայոց հարցը և Եւրոպան» նիւթի մասին հետևեալ ծրագրով.

1) Հայոց հարցի զարգացման պատմական տեսութիւնը, կապված Ռուսաստանի քաղաքականութեան հետ։ 2) Թիւրքիայի և Ռուսաստանի մենակռիւը Հայաստանի համար մինչև 1854 թւականը։ 3) Հայկական վիլայէթներում բարենորոգումներ մտցնելու կենսական անհրաժեշտութիւնը։ 4) Եւրոպայի միջամտութիւնը, բարենորոգումների գործը վերահսկողութեան տակ դնելը. Եւրոպան Պարիզի դաշնագրից յետոյ։ 5) Հայաստանի բարենորոգումների ծրագիրը մինչև Բերլինի կօնգրէսը։ 6) Ծրագիրների անպտուղ լինելը։ 7) Սան-Ստեֆանօյի դաշնագիրը որպէս հիմք Հայաստանի ընդարձակ բարենորոգումների։ 8) Բերլինի կօնգրէսը, Անգլիայի և Ռուսաստանի նրանում կատարած դերը՝ բարենորոգումների վերաբերեալ և Թիւրքիայի գերիշխանութեան վերացումը այդ հարցի մէջ։ 9) Կիպրոսի 1878 թւի դաշնագրութիւնը, որպէս զարգացումն Թիւրքիայի ռէֆօրմներ մտցնելու պարտականութիւնների գաղափարի։ 10) Բարենորոգումների 1880 և 1895 թւերի ծրագիրները և նրանց ամլութիւնը։ 11) Պարբերական խմբական կոտորածներ 1822 թ. Քիօսում, 1850 թ. Քիւրդստանում, 1860 թ. Լիբանանում և Դամասկոսում, 1876 թ. Բուլղարիայում, 1895—1896 թւերին Հայաստանում և Սասունում, 1908 թ. Ադանայում և անընդհատ սպանութիւններ 1909 թւից մինչև մեր օրերը։ 12) Բարենորոգումներ հաստատելու բոլոր փորձերի ամլութիւնը թաղնված է Թիւրքիայի քաղաքական, տնտեսական, կրօնական և իրաւական կեանքի մէջ։ 13) Բալկանեան պատերազմը որպէս նոր էտապ Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու գործի մէջ։ Ռուսաստանի նոր մտադրութիւնները և Գերմանիայի միջամտութիւնը։ 14) Բարենորոգումների 1912 թ. ռուսական ծրագիրը և երրեակ դաշնակցութեան կռիւը երրեակ համաձայնութեան հետ այդ ծրագրի շուրջը։ 15) Գերմանիայի դերը Բաղդադի երկաթուղու կառուցման գործի մէջ և նրա ձգտումների՝ Ռուսաստանի ձգտումներից բաժանվելը։ 16) Պոտսդամի համաձայնութիւնը և նրա վնասակար հետևանքները Ռուսաստանի քաղաքական և ռազմագիտական դրութեան համար Պարսկաստանի և Թիւրքիայի սահմաններում։ 17) Հայկական պլատոյի ռազմագիտական նշանակութիւնը Ռուսաստանի պաշտպանումը ապահովելու մէջ Գերմանիայի յարձակումից։ 18) Հայկական հարցը նոյնպէս և Ռուսական հարց է։ 19) Հայաստանում բարենորոգումներ մտցնելը ներկայանում է որպէս Պոտսդամի համաձայնութեան ծայրայեղ վնասակար հետևանքների ուղղումն։ 20) Հայաստանի բարենորոգումները ներկայանում են որպէս Թիւրքիայի անկախութիւնը պահպանելու բնական պայման։ 21) Միայն անյետաձգելի, արմատական բարենորոգումները կարող են փրկել Փոքր-Ասիայի հայերին անվերջ կոտորածներից։

Դասախօսութեան սկիզբն է ժամը 8½-ին երեկոյեան։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Պետերբուրգ, 21 մարտի

Նախագահում է Կօնօվալօվը։

Դուման ձեռնարկում է քննելու «Պրօվօդնիկ» գործարանի վարչութեան վերաբերութեամբ գործարանային իշխանութեան ցոյց տուած անփոյթ հսկողութեան մասին ուղղված հարցապնդումը։

Մալինօվսկին յայտնում է, որ արդիւնաբերութեան բաժանմունքի կառավարչի բացատրութիւնները չը հերքեցին հարցապնդումի տւեալները։ Նա ընդունեց, որ առաջին թունաւորման դէպքերը եղել են դեռ նոյեմբերին, մինչդեռ իշխանութիւնը ոչ մի միջոց ձեռք չէ առել։ Խօսում են հոգեկան հիւանդութեան մասին, սակայն այդ հնարաւոր է այն ծանր տնտեսական պայմաններում, որի մէջ ապրում է բանւորը։ Մարդկային օրգանիզմը անզօր է դառնում դիմադրելու այն պայմաններին, որոնց մէջ ապրում և աշխատում է բանւորը։

Բաղայեվը թունաւորվելու դէպքերը պատահական չէ համարում. նրանք միշտ եղել են, բայց ոչ այսչափ մեծ քանակութեամբ։ Օրէնքը չէ պաշտպանում բանւորներին, գործարանային տեսչութիւնը անգործ է, իսկ իշխանութիւնը միայն ձգտում է պահել բանւորներին իր ճիրանների մէջ։

Նախագահը մի քանի անգամ կարգի հրաւիրելով հռետորին խիստ դարձւածքներ գործածելու համար՝ վերջում զրկում է նրան խօսքից։

Իվանօվը յայտնում է, որ սահմ.-ռամկավարները ձայն կը տան հարցապնդումը ընդունելու օգտին։ Անհրաժեշտ է փոխել բանւորների նիւթական ու իրաւական դրութիւնը, ստեղծել իսկական գործարանային տեսչութիւն, հնարաւորութիւն տալ զարգանալու բանւորական կազմակերպութիւններին և զբաղվել կանոնաւոր բանւորական օրէնսդրութեամբ։

Սաֆօնօվը յայտնում է, որ նացիօնալիստները կողմնակից են հարցապնդումը ընդունելուն, որովհետև կամենում են իմանալ, թէ ո՞վ է հանդիսանում մասսայական թունաւորման իսկական յանցաւորը։

Չխէնկելին բողոքում է Նովիցկիի այն յայտարարութեան դէմ, թէ գոյութիւն ունի թունաւորողների կոմիտէ, և ասում է, որ Նովիցկին չարամիտ զրպարտիչ է։

Նախագահ.—Դումայի պարոնայք անդամներ։ Ես գտնում եմ, որ անթոյլատրելի է հռետորներին խիստ դարձուածքներ գործածել միմեանց հասցէին (ծափեր աջից)։ Առաջարկում եմ արտաքսել Չխէնկելին 2 նիստից (ծափեր աջից, բողոքներ ձախից. Բացագանչութիւններ. «Ինչո՞ւ արտաքսված չէ Նովիցկին»)։

Չխէնկելին, հանդէս գալով անձնապէս բացատրութիւններ տալու, յայտնում է, որ նա սոսկ իրողութիւնը արձանագրեց, որովհետև Նովիցկին թունաւորման դէպքերը վերագրեց ոչ թէ այն նորմալ պայմաններին, որոնց մէջ գտնվում են բանւորները, այլ առանձին անձանց չարամտութեան։

Նախագահը յորդորում է Դումային հանգստանալ։ Չխէնկելին տեղից ընդհատում է նախագահին։

126 ձայնով ընդդէմ 49-ի ընդունվում է Չխէնկելին երկու նիստից արտաքսելու առաջարկութիւնը։

Մարկօվ 2-րդը ասում է, որ ձայն կը տայ յօգուտ հարցապնդման ոչ թէ ձախակողմեանների սպառնալիքների տակ, այլ խղճմտանքով ու համոզմունքով։

Մարկօվի ճառը յաճախ ընդհատվում է ձախակողմեանների աղմուկից։

Մարկօվը, շարունակելով, գտնում է, որ սօցիալիստներին համբերութիւնից հանեց այն հանգամանքը, որ նացիօնալիստները և աջակողմեանները ձայն են տալիս յօգուտ հարցապնդման։ Աջակողմեանները կամենում են պարզել, թէ ո՞վ է թունաւորում գործադուլից հրաժարված դժբաղդ բանւորներին։ Բանւորուհիները հրաժարվեցին գործադուլ անել, այժմ նրանց թունաւորում են յեղափոխական կուսակցութիւնները քիմիական օբստրուկցիայով։

Ձախ կողմից աղմուկ և բացագանչութիւններ. «Սուտախօս, զրպարտիչ, կորի՛ր»։

Չխէիձէն վրա է ընկնում ամբիօնի վրա բռունցքները սեղմած։ Աղմուկը ուժեղանում է։ Մարկօվը վերցնում է ջրով լի գրաֆինը։ Ամբիօնի և Չխէիձէի միջև կանգնում են պրիստաւների օգնականները։ Չխէիձէն, շարունակելով սպառնական շարժումները, աղաղակում է ինչ-որ, բայց չէ լսվում աղմուկի մէջ, և յետոյ վերադառնում է իր տեղը։ Մարկօվը նշանով ցոյց է տալիս, որ գրաֆինով ջուրը կածէ։ Շարունակվող աղմուկի ու բռունցքազարկերի մէջ (նստարաններին) Մարկօվը իջնում է ամբիօնից։

Նախագահը յայտարարում է, որ խօսել ցանկացողների թիւը 10 է, բայց ժամանակ է նիստը փակել։

Աջից աղմուկ, ձայներ. «Իսկ Չխէիձէն բռունցքներով դէպի ամբիօն էր նետվում, այդ ոչի՞նչ»։

Նիստը փակվում է։

Հետևեալը երկուշաբթի։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Առաջիկայ մայիսի վերջերին Պետերբուրգում Թագաւոր Կայսրի հովանաւորութեան ներքոյ բացվելու է այգեբուծական ցուցահանդէս, որին մասնակցելու է նաև Կովկասի շերամապահական կայարանը։

◆ Թիֆլիսի ապագայ պօլիտեխնիկումը ունենալու է չորս ֆակուլտէտ՝ գիւղատնտեսական, քիմիական, մեխանիկական և տնտեսագիտական։ Պօլիտեխնիկումի կազմը բաղկացած է լինելու վերատեսչից, սրա օգնականից, 4 դեկանից, 25 օրդինարնի պրօֆեսօրներից, 13 էկստրա-օրդինարնի, 15 դօցենտ, 22 գլխաւոր լաբօրանտներ և 13 օգնականներ։ Ուսումնականի վերաբերեալ ծախքը կազմում է 305,000 րուբլի։ Իսկ ընդհանուր ծախքը հաշւում են 628,350 ր.։ Պրօֆեսօրները ընտրվում են ինստիտուտի ուսումնական խորհրդի կողմից. նրանց հաստատում է փոխարքան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի միջոցով։ Մնացած դասատուներին ընտրում է ուսումնական խորհուրդը, իսկ հաստատում է ուսումնական շրջանային հոգաբարձուն։

◆ Մեզ հաղորդում են, որ կիրակի, մարտի 23-ին, առաջնորդարանում կայացաւ հանգուցեալ Ալ. Ղուկասեանի կտակի գործի մասին ժողով, ուր կտակակատար Մն. Խոճումեանց յայտարարել է, թէ հաշիւները շուտով պատրաստ կը լինեն, թէ կանխիկ դրամ կայ մօտ 320,000 ր. և Միքայէլեան փողոցի վրա տունը, որ արժէ աւելի քան 100,000 ր.։ Այսպիսով, կտակի գործադրութեան խնդիրը մօտենում է իր վախճանին։ Պարզվել է նաև, որ վէճ բացող ժառանգների հետ խնդիրը հաշտութեամբ աւարտելով, նրանց տրված է 60,000 ր.։

◆ Շաբաթ, մարտի 22-ին, Թիֆլիսի երկրորդ հաշտարար բաժնի դատաստանական քննիչի մօտ ներկայացան Հ. և Ա. Առաքելեանները և Յովհ. Թումանեան, որ մեղադրվում է առաջինների կողմից զրպարտութեան մէջ։ Քննիչը առաջարկեց հաշտվել։ Առաքելեանները յայտնեցին, որ հաշտութեան միայն մի պայման կայ, այն, որ Յ. Թումանեանը յայտնէ, թէ ինքը զրպարտել է, և ներողութիւն խնդրէ, այլապէս խնդրում են գործը յանձնել պրօկուրօրին։ Յ. Թումանեան յանձն չառնելով այդ պայմանը, կազմվեց արձանագրութիւն՝ գործը պրօկուրօրին ուղարկելու համար։ Ապա Հ. Առաքելեան խնդրեց քննիչին հաստատել և մտցնել արձանագրութեան մէջ, որ «Մշակում» վերջին անգամ տպված (№ 61) լուրը եղել է իրա՝ քննիչի գիտութեամբ և համաձայնութեամբ, և ինքն չէ ստացել այնպիսի մի գրութիւն, որ տպված է տեղական մի թերթում։ Քննիչը հաստատեց։

◆ Ինժ. Դ. Գ. Չեալենը վերջացրել է Գօլովինսկի պր. վրա շինվելիք Կրուժօկի ձմեռային նոր շէնքի յատակագիծը։ Շինութեան աշխատանքները կը սկսվեն ապրիլին։

◆ Նահանգապետը թոյլատրել է Նորաշէնի ծխական դպրոցի հոգաբարձութեանն առաջիկայ ապրիլի 24-ին մի զբօսանք կազմել յիշեալ դպրոցի օգտին։

◆ Երեքշաբթի, մարտի 25-ին, Ժողովրդական Համալսարանների Ընկ. նախաձեռնութեամբ, Ժողովրդական Տանը, 1-ին արական գիմնազիայի դասատու Ն. Ա. Պաւլօվ մի դասախօսութիւն կը կարդայ ռուսերէն լեզուով հետևեալ թեմայով՝ «Радій и радіоактивныя тѣла».

◆ Նահանգապետը թոյլատրել է երդ. հաւատար. Օ. Ս. Բուկշտէյնին ռուսերէն լեզուով մի շաբաթաթերթ հրատարակելու «Кавказскій Журналистъ» անունով։ Թերթը խմբագրելու է Ն. Զ. Գօնզաւօ-Պալչեւսկայա։

◆ Կիրակի, մարտի 23-ին, կայացաւ Հաւլաբարի ս. Մինաս եկեղեցու ծխականների ընդհանուր ժողովը ընտրելու մի քահանայացու հանգուցեալ Սարգիս աւ.-ք. Իգիթեանի տեղ։ Այս ժողովը լինելով երրորդը՝ համարվեց միանգամայն օրինաւոր, մանաւանդ որ ժողովին ներկայ էին մեծ թւով ծխականներ։ Ձայների ճնշող մեծամասնութեամբ (56 ձայնից 50-ով) քահանայ վերընտրվեց Սարգիս սարկաւագ Երզնկեան։

◆ Վաղը, չորեքշաբթի, մարտի 26-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում, նախաձեռնութեամբ Ա. Մանուկեանի, կայանալու է համերգ մի թոքախտաւոր երաժիշտ-ուսուցչի օգտին։ Մասնակցում են դաշնակահարներ օր. օր. Տէր-Գրիգորեան, Բաբալեան, գեղասանուհի Խիթարեան, երգչուհի Յակոբեան, ջութակահար Վրոյր ուղեկցութեամբ լարանուագների, արտիստ Վալերիանօվ, պ. պ. Քափանակեան, Վալադեան և Կացեան։ Համերգի ծրագիրը բովանդակում է հետաքրքրական համարներ։ Ի նկատի ունենալով ընդգծած նպատակը, յուսով ենք որ հասարակութիւնը չի զլանայ իր բարոյական աջակցութիւնը։

◆ Այսօր, մարտի 25-ին, Յունաստանի ազատութեան օրը, Ժողովրդական Տանը յոյն սիրողները կը ներկայացնեն Ս. Պերեսիադի «Օ Խորօս դու Զօլօնգու» 4 գործ. պատմական պիէսը, որի նիւթը վերցված է եպիրոտցիների կեանքից, որոնց սերունդները այժմ ըմբոստացել են ալբանացիների դէմ և աւտօնօմիա են պահանջում։

◆ Շաբաթ, ամսիս 22-ին, Կ. Հ. Բ. Ընկ. բարերար հանգուցեալ Յովհ. Խուդադեանի յիշատակին Մողնու եկեղեցում մատուցված պատարագին երգում էր նոյն Ընկ. Խուդադեան Որբանոցի սանուհիների երգեցիկ խումբը։ Պատարագից յետոյ կատարվեց հոգեհանգիստ, ապա հանգուցեալի գերեզմանի վրա որբերից մէկը այս տարվայ շրջանաւարտ 7 հոգու կողմից արտասանեց մի դամբանական։

ԿՈՎԿԱՍ

◆ Երաժշտութեան ուսուցիչ Ե. Սարգսեանը մտադիր է Գանձակում կազմակերպել մի խմբական համերգ։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Ինչպէս յայտնի է հեռագիրներից, ներկայումս Պետերբուրգում փակված են մի քանի գործարաններ և ֆաբրիկաներ։ Մօտ 100,000 բանւոր այդ պատճառով մնացել են առանց աշխատանքի. Նրանց դրութիւնը ողբալի է։

◆ Պետերբուրգում խօսվում է, որ Բարկը նշանակվելու է առևտրի մինիստր, իսկ Բուլիգօվը դառնալու է ֆինանսների մինիստր։

◆ «Տեղեկատու բիւրօն» հերքում է ներքին գործերի մինիստրի օգնական Ջունկօվսկիի հրաժարվելու մասին տարածված լուրերը։

◆ Ինչպէս յայտնի է, վերջերս ազնուականութեան համագումարը վճռեց արտաքսել հրէաներին ռուս զօրքի միջից։ Այժմ ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի թերթերը, յիշեալ վճիռը հաւանութիւն չէ գտնում ազդեցիկ զինւորական շրջաններում։ Զինւորական մինիստրութիւնը մատնանշում է, որ այդ միջոցը առաջ կը բերէ մեծ բաց զօրքի կազմի մէջ, որով և անհրաժեշտութիւն կերևայ լրացնել այդ բացը քրիստոնեաներից։

◆ Մօսկվայում յայտնի բարեգործ Շախօվը իր միլիօնաւոր կարողութիւնը իր մահից յետոյ կտակում է կանանց բարձր դասընթացքներին և Շանեավսկիի անուան համալսարանին։

◆ «Нов. Вр.»-ում կարդում ենք. «Աւստրիական կառավարութիւնը վաղուց ամեն տեսակ խոչընդոտներ է ստեղծում ռուս ճանապարհորդներին։ Սահմանային իշխանութիւնները իրանց պահում են շատ համարձակ, որոնելով պատրուակ այս կամ այն կերպ սկանդալ անելու։ Վիէննայի նախկին դեսպան Ն. Գիրսը, ստանալով մի շարք գանգատներ ռուսահպատակներից, դիմեց մի յայտարարութեամբ աւստրո-ունգարական կառավարութեան։ Գիրսի յայտարարութիւնը ոչ մի ազդեցութիւն չունեցաւ, և աւստրիացիք շարունակեցին պահել իրանց առաջվայ նման յանդուգն։ Այդ պատճառով հանդէս եկաւ նոր դեսպան Շեբէկօն։ Իր նօտայում նոր դեսպանը խօսում է չափազանց վճռական տոնով և Վիէննայի կառավարութեան ուշադրութիւնն է դարձնում ռուսների գանգատների վրա։ Կարելի է միայն ուրախանալ, որ դեսպանը, վերջապէս, վճռեց հանդէս գալ իշխանական խօսքով։ Գուցէ այժմ աւստրիական խայտառակութիւնները վերջանան»։

◆ Ամուսինների առանձին կենակցութեան օրինագիծը հաստատվեց։

◆ Պետերբուրգի ռուս գրականագէտների ընկերութեան նախագահ Բատիւշկօվը միջնորդել է, որպէսզի համառուսական գրականական համագումարը թոյլատրվի հոկտ. 12-ին։

◆ Վարշավայում մի փողոցում գտնվեց մի երեխայ ուշաթափված։ Իսկոյն լուր տարածվեց, թէ երեխային հրէաներն են սպանել։ Սկսվեց հրէաների ջարդ. Ջարդարարները քարուքանդ արին խանութները, և միայն ոստիկանութեան մեծ ջանքերով ջարդի առաջն առնվեց։ Վերջում պարզվեց, որ երեխան ուշաթափվել էր քաղցից։

◆ «Новое Вр.»-ն հաղորդում է, որ արտաքին գործերի մինիստրութեան մէջ կայացաւ բարօն Տաուբէի նախագահութեամբ այն մասնաժողովի նիստը, որ պաշտօն ունի ծրագիր մշակելու Հաագայի երրորդ վեհաժողովի համար։ Մասնաժողովը կամենում էր ծրագրի մէջ մտցնել ազգութիւնների զինաթափութեան հարցը, բայց վիճաբանութիւններից յետոյ հարցը գտաւ վաղաժամ և հանեց այդ հարցը ծրագրից։ Մասնաժողովը իր բովանդակ ուշադրութիւնը դարձրեց Ժընէվի կօնվէնցիայի մի քանի որոշումների վրա։ Ենթադրվում է, որ Ռուսաստանի կողմից կառաջարկվի լրացնել այդ կօնվէնցիան պատերազմի սարսափները մեղմող որոշումներով։

◆ Ինչպէս հեռագիրը հաղորդեց, Պետերբուրգում բիւջէտային մասնաժողովը առաջարկեց սինօդի օբէր-պրօկուրօրին՝ հարց յարուցել մինիստրների խորհրդում, որպէսզի սեմինարիստներին իրաւունք տրվի մտնել համալսարան։ Սաբլէրը յայտնեց, որ ինքն անձամբ դէմ չէ սեմինարիստներին համալսարանները ընդունելուն, սակայն այդ բանը կախված է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնից, իսկ մինիստր Կասսօն գտնում է, որ համալսարաններն առանց այն էլ լի են և հարկ չը կայ սեմինարիստներին էլ ընդունել։ Սաբլէրի յայտարարութիւնը Կասսօյի բռնած դիրքի մասին ներկայ խնդրի նկատմամբ սենսացիա առաջ բերեց մասնաժողովի մէջ։

◆ «Рѣчь»-ը և «Русск. Вѣд.»-ն ենթարկվեցին 500-ական րուբլի տուգանքի։

◆ Պետական Դումայի պահպանութեան համար ծախք որոշված է 3.200,000 ր.։

◆ Ռիգայի գործարաններում ևս եղան մասսայական թունաւորման դէպքեր բանւորների մէջ։ Սկսվել են գործադուլներ։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մարտի 23-ին Գանձակ քաղաքի բնակիչ Արսէն Աւալեան յայտնեց ոստիկանութեան, որ իր տնից, իր բացակայութեան ժամանակ, անյայտ չարագործներ գողացել են 194 ր. արժողութեամբ զանազան իրեր։

◆ Մարտի 24-ին Թիֆլիսի քաղաքացի Արտաշէս Մալիչկանեան յայտնեց ոստիկանութեան, որ իր գրպանից գողացվել է իր ոսկեայ ժամացոյցը 120 ր. արժողութեամբ։ Ոչ ոքի մասին կասկած չէ յայտնված։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՀՈԳԵՒՈՐ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

Այս մարտի 9-ին Եկատերինօդարում կայացած հայկական հոգևոր համերգի մասին Ռ. Ղօրղանեան յայտնել է «Кубанскій Край» թերթին, թէ ինչ էր հոգևոր համերգի նպատակը։

«Համերգի նպատակն է հասարակութեանը ծանօթացնել մինչև այժմ մեզ հասած հայկական հին կուլտուրայի մնացորդների, հոգևոր երաժշտութեան հետ։

«Հայերը, ինչպէս այդ ուսումնասիրված է այժմ եւրոպացի գիտնականների կողմից, աչքի ընկնող դեր են խաղացել արևելեան գեղարուեստի զարգացման մէջ և նրանց շրջանում քիչ նկարիչներ, ճարտարապետներ չեն եղել, որոնք շինել կամ նկարներով զարդարել են Թիւրքաց և եգիպտական սուլթանների պալատները։ Արևելեան երաժշտութեան զարգացման ասպարէզում, առանձնապէս արաբ-թիւրքական, հայերը նոյնպէս քիչ բան չեն արել։ Հայ երաժիշտ Չուհաճեանը իր ամբողջ կեանքը նուիրեց մանաւորապէս թիւրքական երաժշտութեան և իր երաժշտական գործերով (արևելեան օպերաներով և սիմֆօնիաներով՝ «Արիֆ», «Քէօսէ-քէհեա», «Լէբլէբիջի», «Զեմիրէ», «Օլիմպ» և ուրիշներ) հանդէս է եկել ինչպէս Կ. Պօլսում և Կահիրէում (արքունիքներում և հրապարակով), նոյնպէս և Վիէննայում և Նէապօլում, և մահը խոչընդոտ հանդիսացաւ, որ Պարիզում չը ներկայացրեց իր գործերը, որտեղից հրաւէր էր ստացել տեղական երաժշտական գործիչների կողմից։ Դժբաղդաբար շատ հայ նկարիչ-արևելագէտների անունները կորած են գեղարուեստի պատմութեան համար։

«Դրանում մեղաւոր է հայ հասարակութիւնը։ Մի քանի տարի առաջ՝ Բագուի կուլտուրական Միութիւնը իրան հարկաւոր 200—300 րուբլու համար, որով ուզում էին Չուհաճեանի «Լէբլէբիջի» օպերայի ձեռագիր մասը գնել մի թիւրքից, Բագուի միլիօնէրներին թողած դիմեց մեզ՝ Եկատերինօդար։

«Ի միջի այլոց նկատենք,—ասել է Ղօրղանեանը,—որ այդ ձեռագիրը ձեռք բերվել է արդէն և օպերան տրվեց Բագւում և Թիֆլիսում, իսկ մօտիկ ապագայում պատրաստութիւններ են տեսնվում նոյնը (թարգմանած) ներկայացնել մայրաքաղաքի լաւ բեմերից մէկի վրա։

«Արևելեան երաժշտութեան մասին կարելի է ասել, որ մինչդեռ Արևմտեան Եւրոպայի երաժշտութիւնը կազմված է օրգանական և պայմանական ձևերով և այլ կեղծ ու անտրոշ դասաւորութեամբ, արևելեան երաժշտութիւնը կազմված է բնական հողի վրա, ազատ է վերոյիշեալ ճնշումներից ու պայմանականութիւններից, օժտված է արևելեան հեքիաթային ֆանտազիայով և շատ գիտնական երաժիշտների կարծիքով (ինչպէս օրինակ՝ Վենսան դ'Ենդի, Ռէյեր, Բուրհօլց, Վեկլէն, Մարտի, Օբրի և ուրիշներ) մեծ ապագայ ունի։ Խնդիրը միայն այդ երաժշտութիւնը ուսումնասիրելու մէջ է, որի համար նիւթեր են հարկաւոր, իսկ այդպիսի նիւթեր հայերի մէջ կարելի է գտնել, առանձնապէս թիւրքահայերի մօտ, մանաւոր անձանց ձեռքին։ Նրանց ձեռք բերելը և հրատարակելը, գոնէ որպէս հում նիւթեր, փոքր ծառայութիւն չի լինի երաժշտութեան համար ընդհանրապէս և արևելեան երաժշտութեան համար մասնաւորապէս։

«Հայ եկեղեցական հոգևոր երգեցողութեան ծանօթութիւնը անհրաժեշտ է և հայ հասարակութեան համար, որը բացի խմբական և պատարագի երգերից՝ ոչինչ չէ լսել։ Իսկ պատարագի երգասացութիւնը, որ լինում է ընդամենը 2 կամ 3 ձայնով, շատ գունատ բան է ներկայացնում այն ընդարձակ և հարուստ երաժշտական գանձի, որպիսին է հայկական եկեղեցական երգեցողութիւնը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԹԱՒՐԻԶԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՀԻՒՊԱՏՈՍԻ ՀԵՏ

Թաւրիզում հրատարակվող «Азербайджанскій Листокъ» թերթի խմբագիրը և աշխատակիցը սիրալիր ընդունելութիւն են գտել Թէհրանից ժամանած հիւպատոս Լիտտէնի կողմից։

Ինչպէս յայտնի է, մինչև այժմ Թաւրիզում կար միայն Թէհրանի գերմանական գլխաւոր հիւպատոսարանի ոչ-շտատային գործակալութիւն, բայց այժմ Ատրպատականում գերմանական գործարան շինելու և գերմանացիների թւի աւելանալու պատճառով՝ այնտեղ հիմնվել է հիւպատոսարան։

Ահա ինչ է գրում «Азербайджанскій Листокъ»-ը այդ մասին։

«Հիւպատոսի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ շօշափվեցին Ատրպատականի գերմանացիների դրութեան վերաբերող հարցեր։ Հիւպատոսը հաստատեց, որ Ռուսաստանի և Գերմանիայի միջև կայացած Պոտսդամի 1911 Թ. համաձայնութեան հիման վրա՝ Գերմանիան ճանաչում է Ռուսաստանի յատուկ շահերը Ատրպատականում, որտեղ Գերմանիան միայն առևտրական շահեր ունի, որի պատճառով Ատրպատականի շուկան պէտք է բաց լինի գերմանական ապրանքների համար, հաւասար միւս երկրների ապրանքին։

«Новое Время»-ում և «Кавказъ»-ում տպվեցին տեղեկութիւններ այն մասին, թէ գերմանական կառավարութիւնը նպաստում է այն գերմանացիներին, որոնք ապրում են Ատրպատականում։ Հիւպատոսը խնդրեց ամենակատեգօրիկ կերպով հերքել այդ տեղեկութիւնները, հաւատացնելով որ իր կառավարութիւնը ոչ մի նպաստ ոչ ոքին Ատրպատականում չի տալիս։

«Գերմանական «գորգերի գործարանի» մասին հիւպատոսը յայտնեց, որ այդ հանդիսանում է առևտրական մի ձեռնարկութիւն, որը հիմնված է Բեռլինում Parsische Teppich Gesellschaft ակցիօներական ընկ. կողմից 5¹/₂ միլ. մարկ դրամագլխով։ Այդ ընկ. իր բաժանմունքներն ունի Թաւրիզում, Սուլթանաբադում, Շիրազում, Քիրմանում, Համադանում, Կ. Պօլսում, Զմիւռնիայում և Թիֆլիսում։

«Այդ ընկ. մեծ քանակութեամբ գորգեր է արտահանում նոյնպէս և Կովկասից։ Այն հարցին, թէ կարող է արդեօք այդպիսի մի գործարան, որ լաւ վարձատրութիւն է տալիս ծառայող գերմանացիներին, որևէ դիվիդենդ տալ ընկ. ակցիօներներին, հիւպատոսը պատասխանեց, որ առ այժմ դեֆիցիտ չի սպասվում, իսկ հարկ եղած դէպքում ընկ. կարող է աւելացնել իր դրամագլուխը։ Բացի այդ՝ յիշեալ գործարանը ընկ. միակ ձեռնարկութիւնը չէ Թաւրիզում։ Նա գորգերի խոշոր առևտուր է կատարում, որպիսի ապրանքը նա գնում է և ուղարկում Եւրոպայի և Ամերիկայի զանազան կողմերը։ Շնորհիւ գորգերի արտահանութեան՝ այդ ընկերութիւնը շատ դրամ է մացնում Ատրպատական և դրանով նպաստում է յիշեալ գաւառի հարստանալուն։

«Այն առիթով, թէ Ուրմիայում գերմանացիների ձեռքով հիմնվում է գործարան և ջրաղաց, հիւպատոսը յայտնեց, որ այդպիսի ծրագրի մասին ինքը տեղեկութիւն չունի, բայց այնտեղ ապրում է մի գերմանացի՝ Նէյման անունով, որը Ուրմիայի շրջանում պարապում է հողագործութեամբ։

«Հիւպատոսը նոյնպէս յայտնեց, որ Բաղդադի երկաթուղու Խանեկէն-Թէհրան գծի շինութիւնը վերջացնելուց յետոյ՝ գերմանական առևտուրը Ատրպատականում խոշոր չափերի կը հասնի։

«Խօսակցութեան վերջում հիւպատոսն ասաց. «Ես ինքս ծնվել եմ Պետերբուրգում և մեծ համակրութիւն եմ տածում դէպի Ռուսաստանը և ռուսները, որոնց մէջ ես շատ լաւ բարեկամներ ունեմ Թէհրանում։ Ես յոյս ունեմ նոյն բարեկամական յարաբերութիւնները պահպանել Թաւրիզի ռուս հասարակութեան հետ, որի կողմից ես մինչև այժմ գտել եմ սիրալիր ընդունելութիւն, առանձնապէս կայսերական ռուսական աւագ հիւպատոս Ա. Ա. Օրլովի կողմից»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԻՏԱԼԻԱ

Ջիօլիտտիի հրաժարականը. — Հռոմից տեղեկացնում են, որ քաղաքական շրջաններում հետևեալ կերպով են բացատրում Իտալիայի քաղաքականութիւնը վարող սենեոր Ջիօլիտտիի հրաժարականը.

Այդ հրաժարականը պայմանաւորվում է միջազգային քաղաքական բարդութիւններով, մանաւանդ Ռուսաստանի և Գերմանիայի յարաբերութիւնների սուր կերպարանք ստանալով։

Իտալիայի դաշնակիցներ Գերմանիան և Աւստրիան վարելով ագրեսիվ՝ մարտահրաւիրական քաղաքականութիւն՝ կարող են գործը պատերազմի հասցնել։ Իտալիան, ինչպէս դաշնակցութեան երրորդ անդամը, պէտք է նետվի այդ պատերազմի մէջ, որ սպառնում է նրան անհամար դժբաղդութիւններ, անգամ աղէտ։ Խուսափել պատերազմից՝ նշանակում է դուրս գալ երրեակ դաշնակցութեան կազմից։

Հէնց այդ պատճառով էլ,—լուրեր են պտտվում,—Ջիօլիտտին գերադասում է սկզբից և եթ հեռանալ, որպէսզի վերցնէ իր վրայից պատասխանատւութիւնը այնպիսի լուրջ հարցի այս կամ այն լուծման համար, որից կախված է գուցէ և Իտալիայի բաղդը...

Եւ եթէ, յիրաւի, Ջիօլիտտին հեռանայ, կը նշանակէ՝ փոթորիկը մօտ է, և հաւատ չը պէտք է ընծայել այն տեղեկութիւններին, թէ իբր Ռուսաստանի և Գերմանիայի յարաբերութիւնները մեղմ բնոյթ են ստացել։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պարսկաստանում սկսվել են մէջլիսի ընտրութիւնները։ Ազգաբնակութիւնը անտարբեր է։

◆ Սուֆրաժիստուհիները «պաշտօնապէս» յայտնել են, որ նրանք վճռել են՝ ինչ էլ որ լինի՝ մտնել Թագաւորի պալատը։

◆ Վիլհէլմ կայսրը Պետերբուրգ է գալու Բէտման-Գոլվէգի հետ։

◆ Այս օրերս Պետերբուրգ է այցելելու անգլիական Թագաւորական զոյգը։

◆ Ադրիանուպօլսից մեծ Թւով Թիւրքական զօրագնդեր ուղարկված են դէպի կովկասեան սահմանը։

◆ Զմիւռնիայի Թիւրքաց զօրամասում ապստամբութիւն ծագեց։ Պատճառները քննելու համար Կ. Պօլսից ուղարկված է մի մասնաժողով Կազըմբէյի գլխաւորութեամբ։

◆ Կ. Պօլսի գերմանական դեսպան ֆօն-Վագէնհէյմը կանչվեց Կօրֆու Վիլհէլմ կայսրի մօտ։ «Н. Вр.»-ի Թղթակցի ասելով այդ բանը կապ ունի ֆօն-Սանդէրսի վերջին քայլի հետ, որ ատրճանակը ձեռքին յարձակվեց «Matin»-ի Կ. Պօլսի Թղթակցի վրա, մեղադրելով նրան իր աղջկայ մասին ստայօդ տեղեկութիւններ յայտնելու մէջ։

◆ Վերջին տեղեկութիւնների համաձայն, Իտալիայի ներկայացուցչի և Փոքր-Ասիայի Ադալիայի շրջանում կօնցեսիաներ ունեցող անգլիական սինդիկատի միջև համաձայնութիւնը կայացել է։

◆ Կ. Պօլսի անգլիական դեսպան Մալէրը և գերմանական դեսպան Վագէնհէյմը իրազեկ արին Բ. Դրան, որ այն Թիւրքական ընկերութեան գործունէութիւնը, որ նպատակ ունի շահագործել նաւթաբեր հողերը Փոքր-Ասիայի Միջագետքում, հակառակ է տրամագծօրէն անգլօ-գերմանացի դրամատէրերի շահերին, որոնք անգլօ-գերման - Թիւրքական համաձայնութեան ուժով արտօնված են շահագործելու Միջագետքի բոլոր նաւթաբեր հողերը։

◆ Սօֆիայից հեռագրում են, որ Ֆերդինանդ Թագաւորը, երկիւղ կրելով ցոյցից, չեկաւ ազգային ժողովի բացմանը։ Օպպօզիցիան պարլամենտ եկաւ ցոյցով՝ տնային զգեստներով և գահական ճառի ընթերցման ժամանակ նստած էր։ Կառավարական կուսակցութեան աթոռներում այնպիսի մեծ Թւով ֆէսեր էին երևում, որ ձախակողմեանները հեգնաբար բացագանչեցին. «Ձեր մեծամասնութիւնը կազմել է Բ. Դուռը. կեցցէ՜ սուլթանը»։ Սօցիալիստները աղաղակում էին. «Կեցցէ՜ սահմանադրութիւնը»։

◆ Այս գարնան ունգարական հետևակ ու հեծեալ մի քանի գնդեր պէտք է բանակեն ռուսական սահմանագլխում։

◆ Թէհրանից հեռագրում են, որ քաղաքական հողի վրա, հաւանօրէն կուսակցութեան ձեռքով, սպանվեց իր խանութում հայ Թադէոս-խանը, որի եղբայր Մատթէոսը անցեալ դեկտեմբերին սպանել էր ոմն Արշալոյսի։

◆ Բեռլինում նախկին շահ Մահմեդ-Ալին ծանր տկարացաւ իր շաքարի հիւանդութեան սուր կերպարանք ստանալուց։ Սպասվում է նրա մահը։

◆ Բեռլինից հեռագրում են, որ Հիւսիսային ծովի վրա փոթորկից յետոյ անհետ կորան 18 ձկնորսական նաւ, որոնց վրա գտնվում էին մօտ 1000 մարդ։ Կարծիք կայ, որ բոլորն էլ խեղդվել են։

◆ Թաւրիզից հեռագրում են «Н. Вр.»-ին, որ Թիւրքիան վճռել է Սուջ-Բուլաղում, Ուրմիայում, Խոյում և Սալմաստում հիւպատոսներին փոխարինել գերմանական շկօլան անցած օֆիցէրներով։

◆ Միլանի դատարանը արդարացրեց սօցիալիստական «Avanti» լրագրի խմբագիրներին, որոնք մեղադրվում էին գիւղացիներին գնդակահարելու հրամանը խստագոյնս պարսաւելու և իտալական Թագաւորի հասցէին վիրաւորական յօդուածներ տպելու համար։ Դատավճիռը սենսացիա առաջ բերեց իտալացի հասարակութեան մէջ։

◆ Նէապօլում գործաթող-դերձակները արիւնահեղ ընդհարում ունեցան ոստիկանութեան հետ։ Կան սպանվածներ և վիրաւորներ։

◆ Լուրերի համաձայն, իբրև հակակշիռ ռուս-ռումինական դաշնակցութեան, գաղտնի զինուորական դաշինք է կապվել Աւստրիայի և Բօլգարիայի միջև։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լոնդոնը Թւերով.—Այս օրերս լոյս տեսաւ Լոնդոնի վիճակագրութեան տարեգիրը, որի մէջ եղած չորս Թւերը ընդգծում են հսկայ քաղաքի պատկերը։ Ներկայումս Լոնդոնում կայ 4¹/₂ միլիոն ժողովուրդ։ 60 տարի առաջ բնակչութեան Թիւը կազմում էր 2¹/₄ միլիոն։ 1861 և 1899 Թ. Թ. ընթացքում բնակչութիւնը հետզհետէ աճել է, բայց վերջին ժամանակներս դադարել է աճելուց։ 1000 մարդու ընկնում է 1127 կին։ Քաղաքում 730,000 կին ամուսնացած չեն, 803,000 կին ամուսնացած են և 200,000 կին այրի։ Ինչ վերաբերում է մարդկանց, նրանցից 794,000 ամուսնացած են, իսկ 75,000 այրի։

Իւրաքանչիւր շաբաթ Լոնդոնում մեռնում են 1200 մարդ, ծնվում 2000 երեխայ, կատարվում է 800 պսակադրութիւն, 3000 տնանկներ պահվում են ապաստարաններում, 4800 մարդ բանտ է նստում և 55,000 մարդ աշխատանքի տեղերն է մտնում։ Իւրաքանչիւր հազար բնակչութեան ընկնում է 34 օտարերկրացի։ Առանձնապէս բազմամարդ է ռուսական գաղութը, որը կազմված է 39,000 հոգուց։ Այնուհետև գալիս են գերմանացիները (27,000), լեհերը (24,000), ֆրանսիացիները (14,000), իտալացիները (11,600), աւստրիացիները (9,000) և հօլլանդացիները (4,000)։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՍՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ,

ճարպակալումը, սրտի սկլէրօզը, սրտի բաբախումը եւ Թմնչոցը, նէվրաստէնիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական Թուլութիւնը, զառամութիւնը, հիւծուածութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկւում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ„ անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոտէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամակադրոշմ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք։

(№ 1) (П. 8663) 0—3

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья
С.-Петербургъ.
Մատակարար՝ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾ. Դրան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԱՐՈՂ ԵՆ ԿԱՆԱՅՔ, ՉԸ ՆԱՅԱԾ ԻՐԱՆՑ ՏԱՐԻՔՈՎ ԼԻՆԵԼՈՒՆ, ԵՐԵՒԱԼ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՋԱՀԷԼ։

Երբ որ մեր երեսի կաշին անզօր է լինում իր սեփական ուժերով դէն շպրտել երեսի Թառամած արտաքին շերտը, այդ ժամանակ երեսի գոյնը սկսում է կամաց-կամաց տգեղանալ։ Կաշու արտաքին շերտը գունատվում է, դեղնում՝ որպէս հին Թուղթ, կոշտանում, այնպէս որ նախկին Թարմութիւնը վերադարձնել անկարելի է լինում։ Մինչդեռ՝ այդ օրինակ շերտի ներքևը Թագնված է վարդագոյն նոր կաշի. դրա համար և հարկաւոր է վերևի կաշին հեռացնել, որպէս զի երևան գայ նոր, միանգամայն առողջ կաշին։

Շատ կանայք, որոնք հոգս են տանում իրանց գեղեցկութիւնը պահպանելու և ջահել դէմք ունենալու, վարվում են այսպէս. Սովորաբար վերցնում են Դ-ր Անտօն Մէյերի Դերմօզօնից մի քիչ և քսում երեսին։ Յիշեալ տեղը ներս է ծծվում կաշու խորքը և մի քանի օրվայ ընթացքում, առանց որևէ անյարմարութիւններ պատճառելու, ոչնչացնում կաշու վրա ծածկված անպէտք և կոշտ շերտը, որին բնութիւնը անկարող է հանդիսացել սովորական միջոցով հեռացնելու։ Այդ շերտը անհետանալուց յետոյ երևան է գալիս նրա տակ ծածկված ճկուն և ջահել կաշին, որը տալիս է երեսին գեղեցիկ և երիտասարդութեան յատուկ աշխոյժ տեսք։

Նոյնպէս կարելի է վարվել նաև ճաքճքված, կոշտ և կարմրած ձեռքերի վերաբերեալ։ Եւ որովհետև այդ միջոցը հասարակ է, էժան և աջողութիւն ունի, դրա համար և հասարակութեան լայն շրջաններում ընդունված է որպէս սիրված դեղ։ Աջող հետևանքի հասնելու համար հարկաւոր է նախ և առաջ լուացվել սենեկային ջրով և լաւ սապօնով ու լաւ չորվել։

Եթէ Դուք կամենում էք Ձեզ վրա փորձել այդ միջոցը—նա, ի միջի այլոց, միանգամայն անվնասակար է—գնեցէք դեղատանը 30 գրամ կիսաԹունդ Դէրմօզօն Դ-ր Անտօն Մէյերի և գործադրեցէք նրան մի քանի գիշեր որպէս կօլդ-կրէմ։ Աջող հետևանքը, հաւանօրէն, Ձեզ միանգամայն կը զարմացնէ։

Դէրմօզօնի իւրաքանչիւր արկղիկի վրա փակցված է.

«Издѣліе Лабораторіи Доктора Антона Мейеръ». Եթէ Դ-ր Անտօն Մէյերի անունը կրճատված է կամ խեղաԹիւրված, ակնյայտ է, որ կեղծիք է կատարված։

Տեղեկութիւնների համար կարելի է դիմել՝ С.-Петербургъ, почт. ящ. 371.

(П. 37190)

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտօվսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեկտրօտէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տելէֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—32

ԱԶԴ

Կը փափագէի ունենալ մի հայ կօմպանիօն, որ ունենայ 10-էն մինչև 20,000 ր., մի ֆաբրիկական արտադրութեան համար, որ ամբողջ Ռուսիոյ մէջ կօնկուրանս չունի։ Ես ունիմ հոս յարաբերութիւն այս արտադրութեան համար կայսերական ֆաբրիկաներու հետ։ Արտասահմանի մէջ մեծ սպառում կայ այս արտադրութիւնից։ 100-էն 50-էն—75 զուտ շահ կարելի է սպասել։ Աւելի ընդարձակ տեղեկութեան համար գրել հետևեալ հասցէին. Одесса, Средно-Фонтанская № 8, кв. 10. С. Н. Н.
(Ե. ու.) 280. 3—1

ԲԱՄԲԱԿԻ ՍԵՐՄԵՐ Ամերիկական «ԿԻՆԳ» կոչված

ստացված է սահմանափակ քանակութեամբ «ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» խմբագրատանը։ Որտեղ կարելի է ստանալ նաև անասուններ կերակրելու ճակնդեղի սերմեր «էկկէնդօրֆ» և «Կերշ» տեսակներից, նաև զանազան բանջարանոցային սերմեր։ Баронская ул. № 18, Редакція «Гюхатнтесъ».
(Կ. Ե. ու.) 243. 5—5

USOMASOL
ԱՏԱՄԻ ԿՐԷՄ
Ատամները պահում է առողջ, ամուր և սպիտակ դրութեան մէջ։
Գինը 35 կօպ.
USOMASOL ԸՆԿ.
ՍՏՕԿՀՕԼՄՈՒՄ.
Պահեստը Կովկասեան Ընկ. Դեղային Ապրանքների խանութում։
(M. 50490) 8—4

ՇՈՒՇՈՒՄ
Ընդունում եմ
պատուէրներ
ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ
ֆիլդէկօսի և այլ տեսակի
ԳՈՒԼՊԱՆԵՐ
տղամարդկանց, կանանց և երեխաների համար.
Կանացի ամեն տեսակ ասեղնագործ
ԺԱԿԷՏՆԵՐ
Ընդունում եմ նաև հնամաշ գուլպաները նորոգելու պատուէրներ։
Դիմել՝ Шуша, Мирзоевскій пер. № 3.
М. Оганесянцъ. (օ.մ.) 227. 5—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԱՇՈՏ ԵՐԿԱԹ
ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ
և
Քիւրդ-օղլու հէքիաթը
Գինն է երկու գրքի, պօստի ծախքով միասին, 1 ր. 50 կ.։ Կարելի է մարկաներով։
Դիմել՝ Тифлисъ, книж. маг. «Гуттенбергъ».
(օ. մ.) Г. И Галустяну. 269. 3—1

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
ՏՆԵՐ
Նիկօլայեվսկայա, Չերքէզօվսկայա և Պեսկօվսկայա փողոցների վրա, Դիդուբէում, Մետեխի զառիվայրի վրա մի խանութ, և մի ամարանոց Կօջօրում։ Տեղեկանալ Գօլովին. պր. «Օրիանտ» հիւրանոցում, № 18, առ. ժամը 10—2-ը և երեկ. ժամը 4—6-ը։
254. 5—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՈՒՂԱՐԿՎԵՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ
ՆՈՐ-ՀՈՍԱՆՔ
1914 մարտ № 3.
(176 ՄԵԾԱԴԻՐ ԷՋ)

1) Ազատութեան Արշալոյսին՝ Ա-րաս, 2) Սիրում եմ... (բանաստ.)՝ Լէյլի, 3) Գիւղի բժիշկը՝ Վ. Նուրեան, 4) Խայեամ՝ Թարգմ. բնագրից Ե. Չ. Միրզայեան, 5) Աստղ աղջիկ՝ Բ. Խաբայեան, 6) Հեռաւոր ձայներ (Աշնան երգերից) Ն. Կօբէյկի Թարգմ. Ջելլօ, 7) Զատիկը սև (Պատկեր)՝ Ար. Յովհաննիսեան, 8) Կռապաշտը (բանաստ.)՝ Լէյլի, 9) Յուշեր Տաճկա-Հայաստանի ճանապարհորդութիւնից՝ Ա-Դօ, 10) Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, 11) Աւետիք Արասխանեան՝ Ա. Տէրտէրեան, 12) Ստանիսլաւ Պշիբիշևսկի՝ Սուրխաթեան, 13) ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ 1) Հայկական հարցը և Պօղոս Նուպար փաշան՝ Մ. Ցար. 2) Ե. Ֆրանգեան՝ Գերմաներէն-հայերէն բառարան՝ Մ. Ցար. 3) Գէորգ Տէր-Ղևոնդեան (Գէօ-Ղէօ), Աշխարհացոյց (մատեան հաւաքածու նիւԹապաշտ)՝ Մ. Ս., 14) ՌՈՒՍ ԿԵԱՆՔ՝ Ա. Ադամեան, ՎՐԱՑ ԿԵԱՆՔ՝ Բ. Տ., 16) ԳԻՏԱԿԱՆ ՔՐՕՆԻԿՕՆ. Աւետիք Տէր-Պօղոսեան, 17) Զանազան նկատողութիւններ՝ խմբագրութիւն, 18) Գրքեր և պարբերականներ, 19) Պատկերներ՝ Էրնստ Հէկկել, 20) Յայտարարութիւններ, 21) Բովանդակութիւն։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է № 4
Շարունակվում է 1914 թ. բաժանորդագրութիւնը
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ՝ Ռուսաստան—տարեկ. 7 ր., կէս տարվ. 4 ր., երեք ամսվ. 2 ր. 25 կ.
Արտասահման » 24 ֆր., » » 14 ֆր., » » 8 ֆր.
Դրամ և նիւթեր ուղարկել հետևեալ հասցէով. Тифлисъ, Редакція «Норъ-Осанкъ», Сергіевская № 14. Արտասահմանից՝ Tiflis (Russie, Caucase) Rédaction de la revue «Nor-Hossank».
Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:
(Հ. Կ.) 271. 3—1

ԱՇԽԱՐՀԷ ԱՇԽԱՐՀ
ԿԱՄ
20,000 ՎԵՐՍՏ ԵՒՐՕՊԱՅՈՒՄ
Գեղարուեստական ուղևորութիւն
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
Ուսումնասիրութիւններ և տպաւորութիւններ (Բազմաթիւ պատկերներով)։
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Հատոր առաջին
Պոնտոսի կովկասեան ափերը.—Բաթում, Սուխում, Նոր-Աֆօն, Նօվօրօսիսկ։
Ղրիմ.—Թէօդօսիա, Սիմֆէրօպօլ, Բախչիսարայ, Եալտա, Սեւաստօպօլ։
Միջին Ռուսաստան.—Եկատերինօդար, Ռօստօվ, Նոր-Նախիջևան, Մինսկ, Սմօլենսկ։
Ցարերի մայրաքաղաքները.—Մօսկվա, Պետերբուրգ։
Ֆինլանդիա.—Վիբօրգ, Իմատրա, Հէլսինգֆօրս, Աբօ։
Լեհաստան.—Վարշավա, Լիտօվսկ։

Հատոր երկրորդ
Շուէդիա.—Ստօկհօլմ, Ուպսալա, Մալմօ, Տրելբօրգ։
Պրուսիա.—Բեռլին, Հանօվէր, Օսնաբրիւկ, Հալլէ, Բրեսլաու։
Սաքսօնիա.—Լայպցիգ, Դրեզդէն։
Աւստրիա.—Լեմբերգ, Կրակօւա, Վիէննա, Պրագա։

Հատոր երրորդ
Իտալիա.—Ուդինօ, Վենետիկ, Վերօնա, Բօլօնիա, Ֆլօրէնցիա, Հռօմ, Նէապօլ, (Պօմպէյ և Վեզուվ) Գենուա, Միլան։
Շվէյցարիա.—Լօզան, Ժընէվ, Մօնտրէ, Շիլլօն։

Հատոր չորրորդ
Ֆրանսիա.—Լիօն, Դիժօն, Պարիզ, Կալէ։
Անգլիա.—Դուվր, Լօնդօն։

Հատոր հինգերորդ
Բէլգիա.—Օստանդ, Բրիւսսէլ, Անտվերպէն։
Հօլլանդիա.—Ռօտերդամ, Հաագա, Ամստերդամ, Զաանդամ։

Ամբողջ գործը կազմում է մօտ 2000 երես «Գեղարուեստի» դիրքով։
ԳԻՆԸ 25 ՌՈՒԲԼԻ
Բացված է բաժանորդագրութիւն առաջին հատորի համար—4 ՌՈՒԲԼԻ։
Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Гарегину Левонянъ. Արտասահմանից՝ Tiflis (Caucase Russie) G. Lévonian.
Թիֆլիսում բաժանորդ են գրվում «Գեղարուեստ» խմբագրատանը (Большая Банкская № 4), ինչպէս և «Cafe Central» սրճարանում, Երևանեան հրապարակ։
(Ե.) 145. 10—6

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный